

25/11/1908 թ. Վ. Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

Կ. Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ

ԳԻՒԼԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

ԵՒ

ԳԻՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԿԱՐԻՔԸ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ԷԼԵԲՏՐԱԿԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՍՐԱՅ ԷԶՄԻԱՆՆԻ

1908



Կոստանդին Կ. Մելիք Շահնազարեանցի աշխատութիւնները.

Բ. Կ.

- 1 Ղլըցէ կնանոց պընը փեշակը 1882 թ. (սպառուած) — 20
- 2 Ուղեցոյց գործնական գինեգործութեան 1885 (սպառ.) — 60
- 3 Բուսական աշխարհից մշակուած և անմշակ ծառի կեանքը. տարրական այգեգործութիւն 1886 թ. (սպառուած) . . . — 30
- 4 Շուշիա Ղալին խէրն ու շառը (Տմբալի Խաչանի Ֆելիետոններից) I գիրք 1887 թ. . . — 35
- 5 Փշրանք (Մանկական) I գրքոյկ 1888 թ. . . — 15
- 6 Ծխախոտը և իր վնասները 1888 թ. . . — 10
- 7 Ոգելից Ըմպելիների վնասակարութիւնը 1889 թ. — 10
- 8 Ուղեցոյց գործնական չերամպաշուութեան 1890 թ. — 40
- 9 Վերիամ Չաննիգ (փոխադր.) 1893 թ. . . — 40
- 10 Մեղէա (գրամ 4 գործ. փոխադրութիւն թատրոն ամսագիր 1898 թ. . . — —
- 11 Փոքրիկ նուագածու (մանկական թատրոն) թատրոն ամսագիր.) 1898 թ. . . — —
- 12 Տնդլբազ և Ջուռնա Տմբա II գիրք 1900 թ. . . — 40
- 13 Ջուռնա—Տմբա III գիրք 1901 թ. . . — 40
- 14 Վազի մշակութիւնը գիւղատն. գրադարան № 1 1902 1 —
- 15 Ջուռնա—Տմբա ժողովածու Տմբալի Խաչանի ֆելիետոնների բառարանով երկու գիրք 1907 թ. 1 25
- 16 Փնջիկ (Մանկական ոտանաւորներ) 1907 թ. — 15
- 17 Լուսատոնիկներ, մանկական, փոխադր. 1907 թ. — 40
- 18 Շերամպաշուութիւն գիւղ. գրադ. № 3 1908 թ. — 5
- 19 Տեղեկագիր Ս. Էջմիածնի գիւղատնտեսական բաժնի — 10
- 20 Ռուսահայերի Գիւղատնտեսական վիճակը և գիւղատնտեսական դպրոցների կարիքը 1908 թ. — 10
- 21 Գինեգործութիւն ընդարձակ գիւղ. գրադ. № 2 1908 թ. — 80

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԵՒ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

ՆԻԻՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԸ.



22-205



4706-55

I.

Ի՞նչ է ԳԻԻՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ.

Գիւղատնտեսութիւնը մի արհեստ է, որ սովորեցնում է մեզ հողից աւելի մեծ քանակութեամբ և մի և նոյն ժամանակ աւելի շահաւէտ կերպով մարդու պիտանի այս ու այն նիւթերը արտաբերել և այդ նիւթերը նպատակայարմար կերպով գործադրել. այդ նպատակին հասնելու համար մարդս զանազան բոյսեր ու տունկեր է մշակում հողում և միևնոյն ժամանակ այդ հողի վրայ կամ այդ հողի արտադրած բերքով այլ և այլ ընտանի անասուններ պահում:

Թէ ինչպիսի բոյսեր պիտի մշակուին կամ ինչպիսի կենդանիներ պահուին, կամ ինչպէս ինչ ձևով այդ բոյսերը պիտի մշակուեն կամ կենդանիները խնամուին, որ աւելի արդիւնաբեր լինի, դրա համար որոշ գիտութիւն է հարկաւոր: Բայց միայն լոկ գիտութիւնը բաւական չէ գիւղատնտեսութեան մէջ, անհրաժեշտ է հմուտ լինել և գործնական տեսակէտից և գիտեցածը լաւ գործադրել. գիտութիւնը կարելի է ձեռք բերել գիւղատնտեսական անարկանների ուսումնասիրութեամբ, իսկ հմտութիւնը գործնական աշխատութեամբ, երբ մարդս ինքը անձամբ պարապում ու խելամուտ է լինում գործի մանրամասնութիւններին:

Գիւղատնտեսական գիտութիւնները՝ այն է երկրագործութիւն, անասնապահութիւն և գիւղատնտեսական անտեսութիւն ունին իրենց բազմակողմանի ճիւղերը: Գիւղատնտեսութիւնը ուրիշ արհեստների պէս պարզ արհեստ չէ. նա ոչ միայն կապ ունի այս ու այն բերքի արտադրելու հետ, այլ և այդ ստացուած բերքի որոշ չափ մշակելու, չուկայի համար պատրաստելու, այնպէս որ գիւղատնտեսութեամբ

պարապողը չատ ընդարձակ ծանօթութիւն պիտի ունենայ ոչ միայն ընդհանուր երկրագործութեան, այլ և նրա հետ հազարումի կապ ունեցող գործողութեանց և առարկաների հետ:

Օրինակի համար մի հող ենք վարել, սերմել, ջրել, հնձել, կալսել և ցորենն ստացել, բայց չէ որ հողը հերկելու, ցորենը սերմելու, ջրելու, հնձելու, կալսելու օրէնքների և մեքենաների և նրանց գործադրելու հետ ծանօթութիւն պիտի ունենալ: Ամբարել ենք ցորենը, չէ որ որոշ խնամք է հարկաւոր, որ մեր ցորենը խոնավութիւնից չայրուի կամ չօջորտի:

Այգեգործը տարուայ ընթացքում խնամել է այգին, վազերը կտրել, հողը բահով տել, քաղհանել, բժշկել, ջրել, ստացել բերքը—խաղողը, բայց գրանով միթէ բոլորովին վերջանում է նրա գործը, ուրիշ է եթէ նա լոկ խաղող է ծախում, ինչպէս ասում են ասորանքը իբրև հում նիւթ սպառում, բայց ամենքը նոյնը չեն կարող և չեն անում: Խաղողը որ աւելի շահ բերի, նրանից գինի են չինում: Իսկ գինի չինելու համար պէտք է ծանօթ լինել գինեգործութեան արհեստին—տեխնիկային և շուկայի պահանջներին. այսպէս էլ անասնապահութիւնը, շերամապահութիւնը և միւս ճիւղերը, այնպէս որ եթէ ուզենանք ի մի ամփոփել գիւղատնտեսութեան վերաբերեալ բոլոր աշխատութիւնները, մենք հետեւեալ պատկերը կ'ունենանք:

1. Աշխատութիւններ, որոնք վերաբերում են սերմելուց կամ մի տունկ տնկելուց առաջ հողի պատրաստութեան հետեւանքներն են՝ հողի զանազան բոյսերից, թփերից, քարերից մաքրելը և աստէնիզացիայի ենթարկելը, երբ մէջը կանգնած ջրեր կան կամ հողը սաստիկ խոնավութիւն ունի կամ աղաւթի բաղադրութիւն, հողի խոր կամ երևա հերկելը, փոխելը, ցաքանելը կամ տափանելը, պարարտացուցիչ նիւթերի խնամատարութիւնը և նրանց գործադրութիւնը—փռելը:

2. Սերմելու և բոյսերի զարգացման հսկողութեան ու խնամատարութեան վերաբերեալ աշխատութիւններ, ինչպիսիք են՝ հողի բահով տալը, փխրացնելը, կողմնակի բոյսերի քաղհանը, ջրելը, ոռոգելը, պարարտացնելը, ծառերի և վազերի կտրելը, տնկանոց պատրաստելը, տնկանոցից ծառ հանելը, ծառերի և վազերի պարագիտ հիւանդութեանց բժշկութիւնը և վնասակար միջատների ու թրթուռների փչացնելը:

3. Աշխատութիւններ՝ որոնք վերաբերում են բերք հաւաքելուն, ինչպէս—հունձը, այգեկութը, պտուղների քաղը, արմատաւոր բոյսերի հանոտելը, ընդեղէնների հաւաքելը և այլն:

4) Աշխատութիւններ, որոնք վերաբերում են բերքի պահպանելուն և վաճառահանութեան համար պատրաստելուն —ինչպիսիք են՝ հացահատիկների կալսելը, տեսակների բաժանելը, ամբարելը, պահպանելը, խոտեղէնի խնամքը, դէղդնելը, հակ կապելը, գինի, օղի, դարեջուր և այլ խմիչքներ պատրաստելը ու պահպանելը, ձէթ հանելը, ընդեղէնների թթու դնելը, պտուղների չորացնելը կամ կոնսերվ պատրաստելը, կանեփի, վուշի, բամբակի զգլին ու վաճառահանելու հում նիւթ դարձնելը:

5) Աշխատութիւններ՝ որոնք վերաբերում են կենդանիների բաղմնացնելուն, խնամելուն, պարարտացնելուն, ինչպիսիք են սերունդը աղնւացնող ործերի ընտրութիւնը, նորածինների խնամքը, եղանակի համեմատ այս ու այն սնունդ տալը, սնունդի պատրաստելը և բաժանումը, գոմանոցի, կովանոցի, փարախի, խոզանոցի և հաւանոցի հսկողութիւնը և առողջապահական կանոնները:

6) Աշխատութիւններ՝ որոնք վերաբերում են շերամատան և մեղուանոցին:

7) Աշխատութիւններ՝ որոնք վերաբերում են կենդանիներից ստացուած արդիւնաբերութեան պահպանելուն և նրանց վաճառահանելուն, ինչպէս կաթը, սլանիքը, կարագը, մորթին, կաշին, բուրդը, միսը, ճարպը, ձուն, բոժոժը, թուշումների փետուրը կամ աղուամաղը:

8) Աշխատութիւններ, որոնք վերաբերում են ընդհանուր վարչական մասին—այն է՝ հսկողութիւն գործակատարների, արհեստաւորների, բանւորների վրայ, եղանակի համեմատ աշխատութեանց բաժանումը, յարաբերութեանց մէջ մտնելը, միջնորդների, բիւրօների ու գործարանատէրերի հետ, շուկաների և տոնավաճառների ու գիւղատնտեսական ընկերութեան հետ կապ ու յարաբերութիւն ունենալը, առ ու ծախսի վերաբերեալ պայմաններ հաստատելը, չինութեան, գործիքների և մեքենաների վրայ հսկողութիւնը, խնամքը և այլն:

9) վերջապէս հաշուապահական աշխատութիւնները՝ այն է ելից և մօից, գոյքի, վարուցանքի, գինետան, խոտահարքի, անասնապահութեան, զուտ արգելանքի և կորուստի բոլոր հաշուապահութիւնը:

Բացի վերոյիշեալ գիւղատնտեսութեան վերաբերեալ աշխատութիւնները՝ գիւղատնտեսութեամբ պարագողը կամ հետաքրքրուողը պէտք է աչքի առաջ ունենայ նաև թէ մի բոյս կամ մի տունկ ինչու համար է մշակուում կամ ինչ նպատակի ծառայում:

1) Այսպէս կան բոյսեր, որոնք մշակուում են մարդկանց և անասունների սնունդի համար, ինչպիսիք են—ցորենը, գարին, վարսակը, բրինձը, կորեկը, լոբին, սիսեռը, մաշը, սպալը, եգիպտացորենը և այլն:

2) Կան բոյսեր, որոնք մշակուում են իրենց տերեւների, ցողունի կամ շիւերի համար, ինչպէս առւոյտը, կորնգանը, Հայիրը և այլ խոտերը, որոնք անասնոց կերակրելուն են ծառայում:

3) Բոյսեր՝ որոնք մշակուում են իրենց արմատների համար—ինչպիսիք են՝ ձակընդեղը, գետնախնձորը, կարտոֆիլը, գազարը, բողբոջը, չաղգամը, և այլն:

4) Բոյսեր՝ որոնք մշակուում են հիւթ կամ խէժ ստանալու համար—ինչպիսիք են չաքարեղէգը, մեկոնը (խաշխաշը), արմաւենին, կաուչուկը և այլ խէժ տուղ ծառերը:

5) Բոյսեր, որոնք մշակուում են նրանց պտուղը ստանալու և այդ պտղից այս ու այն նիւթը, ւմպելիքը պատրաստելու ինչպիսիք են՝ վաղը, պողաբեր ծառերը—տանձին, խնձորին, չլորին, դեղձենին, բալին, սերգելին, շադանակենին, ընկուզենին, նշենին ձիթենին և այլն:

6) Բոյսեր, որոնք մշակուում են բժշկական դեղորայք կամ խմիչքների պատրաստելուն ինչպիսիք են՝ անանուխը, անիսոնը, օշինդրը, մատուտակը, (բիանը) գերչակը (հնդկի իւղը)

7) Բոյսեր՝ որոնք մշակուում են իրենց տերեւների համար, ինչպիսիք են՝ ծխախախտը, թէյը, թթենին:

8) Բոյսեր՝ որոնք մշակուում են բանջարանոցում և գործ են ածւում իբրև ընդեղէն—ինչպիսիք են՝ գինձը, սամիթը, կոտեմը, բողբոջը, կաղամբը և այլն:

9) Բոյսերը՝ որոնք մշակուում են նրանցից ձէթ հանելու, ինչպիսիք են՝ կնջութը, կտաւատը, արևածաղիկը:

10) Բոյսեր՝ որոնք մշակուում են իրենց կեղևների համար ինչպիսիք են՝ կաղնին, խցանակաղնին, ուռենին և այլն:

11) Բոյսեր՝ որոնք մշակուում են հազուատեղէնի համար, ինչպէս վուշը, կանեփը, բամբակը:

12) Բոյսեր՝ որոնք մշակուում են գոյնի համար—ինչպէս տորոնը, դափրանը, լեղակը:

13) Բոյսեր՝ որոնք մշակուում են իրենց անուշահոտութեան համար—ինչպէս վարդենին ու զանազան ծաղիկները:

14) Վերջապէս բոյսեր, որոնք մշակուում են վառելափայտ, շինութեանց փայտ, կահկարասիքի և այլն հազարաւոր գործադրութեանց համար:

Հարկ չկայ գիւղացուն այս ամենը իմանալու, քանի որ նրա գործունէութեան շրջանը սահմանափակուած է որոշ տեղով, որը ունի իր տեղական պահանջները, իր կլիմայի և հողի յատուկ բոյսերի ու տունկերի մշակութիւնը, բայց գիւղատնտեսը պարտաւոր է որչափ հնարաւոր է, լայն ծանօթութիւն ունենալ այդ ամենի հետ, որպէս զի կարողանայ ըստ տեղոյն, ըստ կլիմային և ըստ պահանջման ընտրութիւն անել, այս ու այն դէպքում ղեկավարուել իր ունեցած պաշարով և չմնալ շուարուած մի վերահաս պատուհասի կամ հարուածի առաջ:

Գիւղատնտեսութիւնը ամեն երկրի ու կլիմայի մէջ միօրինակ չէ, այլ է Անգղիայի գիւղատնտեսութիւնը, ուր երկիրը մեծ մասամբ մարգագետիններ ու արօտատեղեր լինելով, բնականաբար անասնապահութիւնը և նրա հետ կապուած կաթնատնտեսութիւնը և այլ ճիւղերը առաջնակարգ տեղ են բռնում և գիւղատնտես ժողովրդի հարստութեան աղբիւրը կազմում, այլ է Ֆրանսայի գիւղատնտեսութիւնը, ուր հացաբոյսերի մշակութեան հետ զարգացած է այգեգործութիւնը—յատկապէս վաղի մշակութիւնը և գինեգործութիւնը, ձակընդեղի մշակութիւնը և անասնապահութիւնը, այսպէս էլ այլ է Իտալիային, Ռուսաստանին, Չինաստանին, Հնդկաստանին և Ամերիկային: Մինչև անգամ ամեն մի երկրի կամ մի տէրութեան մէջ կամ հէնց տէրութեան մի մասի մէջ զարգացած է գիւղատնտեսութեան այս ճիւղը, միւսի մէջ մի այլ ճիւղ և ինչպէս մշակուող բոյսերն են տարբերւում մէկմէկուց, այնպէս էլ տարբերւում են նրանց մշակութեան ձևն ու եղանակը:

կը ու գործադրուած միջոցները: Բայց ընդհանուր առմամբ գիւղատնտեսութիւնը մի նպատակի է ծառայում, այն է՝ որչափ հնարաւոր է հողից այս ու այն օրդանական մասերը աւել կամ պակաս չափաւ ստանալ և կեանքի մէջ գործադրել: Թէ գործնական կեանքի մէջ հողի կամ կենդանիների արդիւնաբերութիւնը ինչ ձևով է ստացւում, այդ կախուած է մի ազգի, մի ժողովրդի գործ դրած միջոցներից, այդտեղ մեծ դեր է խաղում քաղաքակրթութեան աստիճանը, քաղաքական ու տնտեսական պայմանները:

Առհասարակ ամեն մի երկրի գիւղատնտեսութեան զարգացման աստիճանը չափւում է հողի որոշ տարածութիւնից ստացուած գուտ արդիւնքի քանակից: Կարծիք չկայ, որ արդիւնաբերութիւնը բարձր է այնտեղ, ուր մարդիկ աւելի զիտակցաբար են վերաբերւում գործին, աւելի նախապատրաստուած են, աւելի կատարելագործած մշակութեան եղանակը, աւելի ծանօթ տեղական կլիմայական ու հողային պայմաններին, իրենց ձեռքի տակ նիւթական միջոց ունին և մշակելու կատարելագործուած գործիքներ:

II.

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄԵԶԱՆՈՒՄ.

Յաւելով պիտի խոստովանենք, որ Կովկասեան գիւղատնտեսութիւնը դեռ իր խանձարուրի մէջն է. մեր գրականութիւնը գիւղատնտեսութեան վերաբերեալ շատ աղքատ է, մենք ոչ մի գրաւոր յիշատակութիւն չունինք ոչ անցեալի վերաբերութեամբ և ոչ էլ լուրջ ուսումնասիրութիւն ներկայ վիճակի. մինչև այսօր, մենք ոչ թէ մի բարձրագոյն, այլ միջնակարգ գիւղատնտեսական դպրոց անգամ չունինք Կովկասում—չենք խօսում գիւղատնտեսական թերթի, չըջիկ գիւղատնտեսների, օրինակելի ազարակների, ֆէրմ—էքսթրների ու տարրական դպրոցների համար, որոնց մասին գաղափար չունի մեր ժողովուրդը:

Մեր գիւղատնտեսութիւնը նախնական կամ ինչպէս ասում են նահապետական չրջանից շատ հեռի չէ գնացել, մեր ժողովուրդը դեռ նոյն հացաբոյսերի մշակութեամբ է

սլարապում, ինչ որ դարեր առաջ և այսօր մեծ մասամբ դեռ նոյն նահապետական գութանն ու արօրն է գործածում, նոյն փայտէ փողիք, կալսելու կամիր, Նոյի օրից մնացած հնձաններն ու կարասները: Միայն մի խոշոր տարբերութիւն կ'իմէ կայ, այդ այն է, որ առաջուայ Շիրակայ ամբարները չկան, որ կարողանում էին շատ օրկորներ կերակրել. քաղցածութիւնը այժմ ստիպում է գիւղացուն ուրիշ ասպարէզ ընտրել, իր աղորուստի նիւթը մեծ մասամբ գրսից ներմուծել:

Մեր հողագործութեան բնական պայմանները անկասկած դէպի վատն են փոխուել. մեր հողերը մաշուել են կորցրել իրենց պտղաբերութիւնը, կլիման փոխուել է քանի որ անտառների անխնայ կտրելով՝ ցամաքել են շատ աղբիւրներ, առուներ ու գետակներ, երաշտը զգալի է ոչ միայն դաշտավայրերում այլ և լեռնագագաթներում: Ինչպէս հողագործութիւնը, այնպէս էլ անասնապահութիւնը և գիւղատնտեսութեան միւս ճիւղերը տեխնիկայի կողմից ոչ միայն առաջ չեն գնացել, դեռ շատերը յետադարձ վիճակի մէջ են:

Մեր յետամնաց գրութիւնը հարկաւ ունեցել է և ունի իր շատ պատճառները, ինչպէս աշխարհագրական դիրքը, հազորգակցութեան դժուարութիւնները, ազգաբնակչութեան յետագէմ վիճակը, քաղաքական և տնտեսական այլ և այլ պայմանները: Ծիշտ է այս վերջին 20 տարիներում երկաթուղու գիծը անցնելով ու մի քանի ճանապարհներ բացուելով, փոքր ինչ ցնցուկից ժողովուրդը, նրա յարաբերութեան չրջանը լայնացաւ, նոր շուկաներ, նոր սղահանջներ առաջ եկին, գիւղատնտեսութեան մէջ մուտք գործեց կապիտալը, բայց ազգաբնակչութիւնը չօգտուեց այդ հանգամանքից, նա մնաց անշարժ և իր տնտեսութիւնը դեռ շարունակում է նախնական ձևով, քանի որ նա իր առաջ իր հարեանի մօտ ոչ մի օրինակելի տնտեսութիւն չէ տեսնում, իսկ օտարների մօտ տեսած ժամանակն էլ շատ անգամ աչքերը փակում: Նրան անծանօթ են այս ու այն բարեփոխութիւնները, որ վաղուց ի վեր գոյութիւն ունեն արեւմտեան ազգերի մօտ, քանի որ առաջնորդող, ղեկավարող չունենալով՝ բնականաբար նա այդ անշարժութեան մէջ էլ պիտի մնար: Մեր Կովկասի գիւղատնտեսութեան մէջ փոքր ի շատէ աչքի ընկնող ճիւղերը իրենց բաղմակողմանի թերութիւններով հանդերձ՝ այդ վաղի

մշակութիւնն է ու գինեգործութիւնը, հայաբոյսերի, բամբակի մշակութիւնը և անասնապահութիւնը: Այդ ճիւղերը իրենց արժանաւոր տեղը կրճենն կովկասի տնտեսութեան մէջ այն ժամանակ, երբ ժողովուրդը գիտակցաբար կվերաբերուի գործին և կհասկանայ չրջապատող պայմանները, կեանքի և ժամանակի նորանոր պահանջները:

Մեզանում շատ անգամ է խօսուել ժողովրդի տնտեսական դրութիւնը բարւոքելու մասին, բայց ոչ մի գործնական միջոց չէ ձեռնարկուել և եթէ եղել են մասնաւոր անձանց կողմից փորձեր, այդ էլ այս ու այն հանգամանքների չնորհիւ դեռ իր սաղմի մէջ է խեղդուել:

Բայց չպէտք է բաղդի բերմունքին թողնել կովկասեան գիւղացու վիճակը, նրան պիտի առաջնորդել, յամառ կերպով, քայլ առ քայլ վարժեցնել, գործնականապէս ցոյց տալ մշակութեան, այս ու այն տնտեսութեան եղանակի առաւելութիւնները, հնի պակասաւոր կողմերը և ծանօթացնել գիւղատնտեսական գիտութեան հիմնական օրէնքների հետ, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ իր տնտեսութեանը այս կամ այն ուղղութիւնը տալ:

Ո՞վ պէտք է այդ առաջնորդող ու ղեկավարող դերը ստանձնէ, ո՞վ պէտք է հարթէ այն ճանապարհը, որ տանում է ժողովրդին դէպի բարեկեցութիւն, դէպի տնտեսական բարգաւաճում:

Դրան միայն մի պատասխան կայ՝ գիւղատնտեսական զարգացում, որի վրայ պիտի կեդրոնացնենք մեր գլխաւոր ուշադրութիւնը և մեր զարոցական ծրագրի մէջ մտցնենք:

III.

ԻՆՁ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՆՊԱՏԱԿԸ.

Ամենքին քաջ յայտնի է, որ զարոցի նպատակը պիտի լինի աշակերտների բնածին ընդունակութիւնները զարգացնել, նրան տալ այնպիսի մտաւոր պաշար ու չրջահայեցողութիւն, որ նա ընդունակ լինի գործնական աշխատանքի և կարողա-

նայ ապագայում գիտակցաբար մաքառել կեանքի խոչ ու խուժերի դէմ:

Դժբաղդաբար մեր գիւղական երեխաները թէ՛ ընտանեկան և թէ՛ դպրոցական շրջանում զուրկ են մնում այդ կենսական պահանջից, գիւղական դպրոցը ոչ միայն չէ օգնում երեխաների բնական զարգացմանը, նրանց մէջ չէ զարթեցնում գիտակցութիւն, հետաքրքրութիւն դէպի չրջապատող երեւոյթները, նրանց չէ նախապատրաստում բուն կեանքի համար, այլ մի քանի տարիներ գրքերով ու տետրակներով զբաղեցնելով՝ նա աւելի լայն անջրպետ է բանում մանուկի ու իր չրջապատող աշխարհի մէջ: Ընդհանրապէս գալը ու գալը չէ զարգացնում և կարգաւ, աշխատում է երեխայի մէջ մտցնել որոշ սերմեր, բայց այդ սերմերը ըստ մեծի մասին ծիւ չեն առնում, խեղդուում, փչանում են առաջին պատահարից, որովհետեւ հիմնուած չեն լինում փորձնական կամ գործնական հիմունքների վրայ և մանուկի մտաւոր հորիզոնը այնքան սահմանափակ է, նրա մէջ յառաջախաղացութեան, ինքնուրոյն զարգացման կորիզը, եթէ կարելի է այսպէս ասել, այնպիսի պայմաններով է չրջապատուած, որ ծիւ չէ առնում, ոտտեր ու արմատներ ձգում, այնպէս որ դպրոցական կրթութիւնը իր նպատակին չէ ծառայում հերիք չէ, այլ և նա շատ անգամ անորոշ վիճակի մէջ է գնում երեխայի ապագան: Նա ոչ կապում է այն միջավայրի հետ, որի մէջ ծնունդ է առել, մնում ու մեծացել և ոչ էլ այնքան պաշար է տալիս, որ ուրիշ մթնոլորտ ընտրելով՝ կարողանայ շուտով իրեն խորթ ու անծանօթ կեանքի հետ յարմարուել: Եւ դրա հետեանքը լինում է մեր գիւղացու տնտեսական անկումը: Նրա բարոյական ու փիլիքական այլասեռումը: Գիւղական տարրական դպրոցը իր սահմանափակ ծրագրով, չէ կարող գիւղացու պահանջներին գոհացումն տալ, նրա անհամար ցաւերին դարման լինել, նրան հաց է հարկաւոր, մտաւոր և անբաւարար մտունը նրա փորը չէ կշտացնում: Ընդհանրապէս գալը ու գալը չէ զարգացնում և կարգաւ, աշխատում է երեխայի մէջ մտցնել որոշ սերմեր, բայց այդ սերմերը ըստ մեծի մասին ծիւ չեն առնում, խեղդուում, փչանում են առաջին պատահարից, որովհետեւ հիմնուած չեն լինում փորձնական կամ գործնական հիմունքների վրայ և մանուկի մտաւոր հորիզոնը այնքան սահմանափակ է, նրա մէջ յառաջախաղացութեան, ինքնուրոյն զարգացման կորիզը, եթէ կարելի է այսպէս ասել, այնպիսի պայմաններով է չրջապատուած, որ ծիւ չէ առնում, ոտտեր ու արմատներ ձգում, այնպէս որ դպրոցական կրթութիւնը իր նպատակին չէ ծառայում հերիք չէ, այլ և նա շատ անգամ անորոշ վիճակի մէջ է գնում երեխայի ապագան: Նա ոչ կապում է այն միջավայրի հետ, որի մէջ ծնունդ է առել, մնում ու մեծացել և ոչ էլ այնքան պաշար է տալիս, որ ուրիշ մթնոլորտ ընտրելով՝ կարողանայ շուտով իրեն խորթ ու անծանօթ կեանքի հետ յարմարուել: Եւ դրա հետեանքը լինում է մեր գիւղացու տնտեսական անկումը: Նրա բարոյական ու փիլիքական այլասեռումը: Գիւղական տարրական դպրոցը իր սահմանափակ ծրագրով, չէ կարող գիւղացու պահանջներին գոհացումն տալ, նրա անհամար ցաւերին դարման լինել, նրան հաց է հարկաւոր, մտաւոր և անբաւարար մտունը նրա փորը չէ կշտացնում: Ընդհանրապէս գալը ու գալը չէ զարգացնում և կարգաւ, աշխատում է երեխայի մէջ մտցնել որոշ սերմեր, բայց այդ սերմերը ըստ մեծի մասին ծիւ չեն առնում, խեղդուում, փչանում են առաջին պատահարից, որովհետեւ հիմնուած չեն լինում փորձնական կամ գործնական հիմունքների վրայ և մանուկի մտաւոր հորիզոնը այնքան սահմանափակ է, նրա մէջ յառաջախաղացութեան, ինքնուրոյն զարգացման կորիզը, եթէ կարելի է այսպէս ասել, այնպիսի պայմաններով է չրջապատուած, որ ծիւ չէ առնում, ոտտեր ու արմատներ ձգում, այնպէս որ դպրոցական կրթութիւնը իր նպատակին չէ ծառայում հերիք չէ, այլ և նա շատ անգամ անորոշ վիճակի մէջ է գնում երեխայի ապագան:

իր 10—12 տարեկան տղան, որ հանդուժ կարող էր իր հորթը արածացնել կամ իր գութանում հօտաղ դառնալ:

Այն, կար ժամանակ երբ մեղանում զիւղական ընտանիքը 20, 30 և աւելի հողուց էր բաղկացած. հայր, մայր, որդիք, թոռներ, ապրում էին միասին մի յարկի տակ. իրենց վարուցանքը, դրսի ու ներսի աշխատութիւնները ընտանիքի բոլոր անդամներն էին կատարում. ուսպար, հօտաղ կամ ծառայ վարձելու կարիք չէին զգում և նա գոչ էր իր վիճակից. ամեն բանի առատութիւն էր, պապենական մնացած արօրն ու գութանը, մի քանի կթանները կշտացնում էին բոլորին և դեռ զիւղացին արտահանում էր աւելորդ կամ սեօրուայ համար ամբարում: Այդպիսի ընտանիքը իր տան աւելորդ անդամներին դեռ քաղաք էր ուղարկում որ և է սովորաբար մօս դուլլուդ անելու կամ որ և է վարպետի մօտ արհեստ սովորելու կամ թէ դպրոց էր տալիս ուսում առնելու, մարդ դառնալու, առանց աչք ածելու, որ մի օր նա պէտք կգայ իրեն: Այդպիսի ընտանիքները իսկապէս մեծ ոյժ էին ներկայացնում և մենակ մաքառում վերահաս չարիքի դէմ: Բայց այդ այն ժամանակն էր, երբ կար մի օղակ, որ կապում էր ինչպէս մի ընտանիքի անդամներին իրօր հետ, այնպէս էլ զիւղական համայնքին. այդ օղակը գէպի միմեանց ունեցած հաւատն էր, միմեանց հետ կապող սէրը, յարգանքը, միմեանց քեանքը քաշելը, փոխադարձ օգնութիւնը: Այժմ պատկերը փոխուած է. հայ գիւղը այն չէ, ինչ որ 20 տարի առաջ. փոխուած է ընտանեկան կազմը, նիստ ու կացի եղանակը, շրջապատող պայմանները. ոչ միայն չկան նահապետական մեծ օջաղները, այլ և հազուադէպ են 10—15 հողուց բաղկացած ընտանիքները: Մի հօր զաւակները միասին չեն ապրում հերիք չէ, այլև շատ յաճախ տեսնում ենք նրանց գաղանացած, լարուած գրութեան մէջ, միմեանց թշնամի: Ընտանիքի բաժան բաժան լինելով՝ կայքի, գոյրի, հողի ևս բաժան բաժան լինելուց՝ մեծ անտեսութիւնը մանրանալով՝ այլևս չէ գոհացնում ոչ մէկին: Այդպիսի անտեսութիւնը գնալով քայքայուած է, զիւղացին պարտքերի տակ ճնշւում, որովհետեւ մենակ մնալով, աշխատութեան մեծ մասը ուրիշի ձեռքով է կատարում. նա վարձում է և հօտաղ և հնձուր և կալուոր, որոնց պէտք է վարձատրէ կամ իր բերքից որոշ մաս

հանէ ուղղակի իր տան անդամների բերքից կտրելով: Աստուած չանէ, որ անօդնական գիւղացին հիւանդանայ կամ նրա լճկանը սատկէ, կարկուտը, մորեխը, երաշար, ցրտահարութիւնը և այս ու այն պատուհասը վրայ հասնէ, կանգնում է նրա անտեսութեան մեքենան, աղքատութիւնը լայն փռում իր թևերը այդպիսի տան վրայ և կամայ կամայ անխուսափելի դարձնում աւերումն ու քայքայումը: Հնար կայ ասելու, որ այդպիսի վիճակում նա ոչ միայն չէ կարողանում իր հասարակական պարտականութիւնները կատարել՝ ուսման ու դպրոցի վրայ մտածել, այլ և իր անտեսութեան մէջ թէկուզ մի աննշան բարեփոխութիւն մտցնելու վրայ աչք դնել: Այն, հացի խնդիրը խեղդում է ամեն բան:

Ով չատ ու քիչ ծանօթ է գիւղական կեանքին, նկատած կլինի թէ ինչ սոսկալի խեղճութիւն է տիրում այնտեղ. հեշտ է ասել խեղճութիւն, բայց պէտք է տեսնել, զգալ, որ հասկանալի լինի այդ:

Մեր գիւղերը հետզհետէ դատարկում են, աշխատաւոր երիտասարդ ուժերը փոխանակ մայր հողի հետ կապուելու, յուսահատ թողնում, հեռանում են օտարութիւն, թերեւ աւելի չարքաւ, աւելի տաժաճելի աշխատութիւն տեսելու և բոլորովին խորքանում մայր հողից. վախատութիւնը միւս կողմից գլուխը բարձրացրած՝ թոյլերին պատուանդան է չինում, երբորդ կողմից օտարի մրցումը, հողի քչութիւնը, ջրի պակասութիւնը, կալուածատէրերի ճնշումը փորձորում են նրա գոյութեան հիմունքները:

Հողը, որ գիւղացու ապրուստի գլխաւոր աղբիւրն է կազմում, ինչպէս ասացինք, դարեւ շարունակ միևնոյն հացաբոյսերի համար մշակուելով՝ թուլացել կորցրել է իր արգաւանդութիւնը և զիւղացուն անյայտ են ուժասպառ հողերի վերականգնելը: Նա անադին փիղիքական աշխատութիւն է գործ դնում գութանելու, տափանելու, հնձելու, կախելու վրայ. նա չգիտէ, տեղեկութիւն չունի գիտութեան հարթած ճանապարհների մասին, կատարելագործուած մեքենաների, դորժիքների, որոնք եռապատիկ հեշտացնում են աշխատութիւնները, նա գաղափար չունի, որ միևնոյն կտոր հողը սերմնափոխութեամբ, այս ու այն պարարտացուցիչ նիւթեր գործ դնելով՝ առանց հանդիստ տալու երկար տարիներ կա-

բիւլի է մշակել և արդիւնաբերել: Հիւանդանում է գիւղացու կովը, լծկան եզն ու գոմէ-
չը, նա հնարաւորութիւն հունի ցաւը իմանալու, բժշկելու: Բայց ինչ վարակուում է այս ու այն հիւանդութեամբ, թրթուրը խօսում է պողատու ծառերը, կարկուտը հարուածում ցանք-
սերը, գինին փոխում իր բնական համն ու գոյնը, չերամի որդը ջրով անցնում, այս ու այն հիւանդութեան ենթարկուում, նա մնում է շուարած: Նա չգիտէ դիմադրել, չգիտէ նրանց առաջն առնել: Առատ տարիներին գիւղացին չգիտէ իր բեր-
քից չահուելու եղանակը, նրան անյայտ են շուկաները, սպա-
ռելու տեղերը: Նոր սերմ է լոյս ընկել, նոր տունկ, նոր պահանջ, նա չգիտէ այդ, մէկը չկայ որ նրան հասկացնէ, ծանօթացնէ իր տնտեսութեան հեշտ միջոցների, այս ու այն գիւտի, նոր փորձի հետ և այս դրութիւնը երկար տարիներ շարունակուել են և մենք հեռուից միայն թամաշաչու դեր ենք կատարել և շատ ժամանակ դատարկեալ գիւղացուն, որ նա ծոյլ է, որ նա անընդունակ է, այսպէս է, այնպէս է:

Ամեն օր լսում ենք խօսքեր, գիւղ, գիւղացիութիւն, հող, կալուածական խնդիր, բայց գիւղացու հացի խնդրի մասին ոչ ոք չէ մտածում: Մինչև այսօր մէկը չմտաւ հայ գիւղացու խրճիթը, չուսումնասիրեց նրա նիստ ու կացը, նրա տնտեսութեան մշակութեան եղանակը, չբացատրեց այս ու այն մեքենայի, գործիքի առաւելութիւնը, չբացատրեց գիւղացուն, որ փոխուել են մեր կեանքի պայմանները, ընդար-
ձակուել մեր յարաբերութիւնները դրսի աշխարհի հետ, ստեղ-
ծուել նոր պահանջներ և նա՝ գիւղացին պէտք է յարմարեցնէ իր կեանքի պայմանները նորին, բարեփոխէ ինչ որ կարելի է ու անհրաժեշտ է բարեփոխելու, նոր հոսանք, նոր ուղղու-
թիւն մտցնէ ինչպէս մշակութեան եղանակի, նոյնպէս և մշակ-
ւող բոյսերի մէջ, առաջնորդ ունենալով գիտութիւնը, եւրո-
պացիների և մեր օտարագրի հարեանների այդ ասպարէզում ունեցած հետեանքը: Չէ որ գիւղացին որչափ գիտակցաբար վերաբերուի իր գործին, որչափ նա գիտութեան տուած փոր-
ձերով զինուած լինի, որչափ նա իրական կեանքի պայման-
ներին ու պահանջներին լաւ ծանօթ լինի, այնքան նա գիւ-
րութեամբ կ'մտախոյզ եկող չարիքների ու հարուածների դէմ և կարող կ'լինի իր տնտեսութեան այս կամ այն ընթաց-

քը տալ կամ իր նպատակին հասնելու համար այս կամ այն միջոցը ընտրել: Մեր կովկասը, որ իր հողային ու կլիմայա-
կան պայմանների նորհիւ ուրիշների նախանձն է չարժուած ու ախորժակները գրգռում, իր հարազատ զաւակների համար խորթ մօր դեր է կատարում և շատերը փախուստ են տալիս նրանից. ժամանակն է վերջապէս աշխատել գիւղատնտեսա-
կան տարրական գիտելիքները ընդհանրացնել մեր ժողովրդի մէջ, ժամանակ է, որ գիւղական տարրական դպրոցները լոկ
գրել կարգաւ չսովորեցնէին գիւղացի երեխային, այլ գիրք ու գրչի հետ՝ բահ ու բրիչ, մանգաղ ու գերանդի, արօր ու գու-
թան բանեցնելը, ծանօթացնէին նրան շերամապահութեան, մեղուապահութեան, այգեգործութեան և միւս ճիւղերի հետ: Այդ ժամանակ գիւղական երեխան, ապագայ երկրագործը, աշակերտական նստարանից կ'վարժուէր գործնական աշխա-
տանքի, կսիրէր հողը, նրա մտաւոր հորիզոնը աւելի ևս կ'ըն-
դարձակուէր ու դպրոցում ստացած թէկուզ տարրական գի-
տութիւնը նա օգտակար կերպով կ'գործադրէր իր հանդում, իր ագարակում և կշահագործէր հողը, ընտելւում և ոչ իր նման մարդիկ, ահա այդ ժամանակ դպրոցը իր արժանա-
ւոր տեղը կ'ընէր գիւղացու աչքում, նա իր վերջին կոպէկը չէր խնայիլ նրա բարեկարգութեան և պահպանութեան, ինչի որ նրա մէջ կգտնէ իր ապագայ նեցուկը, իր տնտեսական վիճակի բարւոյթման յենակէտը: Իսկ մանկավարժական տե-
սակէտից, գիւղատնտեսական տարրական դպրոցի միջոցաւ աւելի շուտ հասած կ'լինենք մեր նպատակին—այն է կղա-
րացիները երեխայի բնածին ընդունակութիւնները, կ'աշխատենք նրա մտաւոր հորիզոնը ու գործնական պարագային միջոցաւ նրան կ'վարժեցնենք դիտելու, համեմատելու, փիղիքապէս դար-
գանալու և աշխատանքի մարդ դառնալու:

IV.

ԻՆՉ ՏԻՊԻ ԴՊՐՈՅՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ ԳԻՒՂԱՅՈՒՆ.

Նախ քան այս հարցին ուղղակի պատասխանելը, մենք աւելորդ չենք համարում համառոտակի մէջ բերել թէ գիւղատնտեսութիւնը և գիւղատնտեսական գիտութիւնները զարգացնելու համար մեզանից աւելի քաղաքակրթուած երկիրներ՝ մասնաւորապէս Աւստրա—Հունգարիա կամ Ֆրանսան ինչ միջոցների են դիմած և նրանց մէջ տարրական կամ սկզբնական դպրոցները ինչ դեր են խաղում գիւղատնտեսութիւնը տարածելու մէջ:

ԱՒՍՏՐԱ.—ՀՈՒՆԳԱՐԻԱ.

Ա. Ժողովրդական դպրոցների եւ ուսուցիչների մասնակցութիւնը գիւղատնտեսական գիտութիւնները տարածելու մէջ *.

Աւստրեան ժողովրդի բազմակողմանի պահանջներին բաւականութիւն տալու համար բացած ունի հետեւեալ դպրոցները:

1) Մի բարձրագոյն դպրոց Վեննայում երկու բաժանմունքով, գիւղատնտեսական և անտառապահական: Այդ դպրոցի նպատակն է պատրաստել գիւղատնտես վարժապետներ, գիտնական կառավարիչներ և անտառապետներ և առհասարակ ունեւոր երկրագործ դասակարգի որդոց բարձրագոյն կրթութիւն տալ:

2) Մի շարք միջնակարգ դպրոցներ, որոնց նպատակն է զլրաւորապէս երիտասարդ հողագործներին գիւղատնտեսական լրակատար կրթութիւն տալ, զլրաւորապէս ուշ դարձնելով գործնական պարապմունք: Այդպիսի դպրոցներից են Կլոստէրնէյրուրգի այգեգործական ու գինեգործական և Սէն Միխէլի գիւղատնտեսական դպրոցները: Այդ դպրոցներում

*) Գիւղատնտեսական դպրոցների մասին մեր գրութեանը քաղում ենք Ն. Շաւրովի յօդուածից—Труды Кавказскаго общества Сельскаго Хозяйства № 9—12. 1888 г. Թէեւ այդ ժամանակից դէսը անշուշտ փոփոխութիւններ կլինեն մուծ, բայց հիմնական ծրարիրը կարծում ենք նոյնը պիտի լինի:

աւարտածները կարող են Վէննայի բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցը մտնել և աւելի կատարելագործուել:

3) Սկզբնական գիւղատնտեսական և անտառապահական դպրոցներ, որոնց նպատակն է թէ ընդհանուր և թէ այս ու այն ճիւղի վերաբերութեամբ կարեւոր գործնական տեղեկութիւններ հաղորդել փոքր հողատէրերի որդոց:

4) Ժողովրդական դպրոցներ հողաբաժիններով, որոնք մեծ գեր են խաղում գիւղատնտեսութիւնը ընդհանրացնելու մէջ, որոնց մասին առանձին կխօսենք:

5) Բացի դպրոցները, տէրութիւնը ժողովրդի մէջ գիւղատնտեսական գիտութիւնները աւելի լայն չափով տարածելու նպատակաւ հաստատել է առանձին գիւղատնտես չրջիկ ուսուցիչներ, որոնց պարտականութիւնն է պարնան, ամառուայ և աշնան ընթացքում իրենց յանձնած որոշ չրջանի բոլոր գիւղերը մի մի այցելել և գիւղացիներին հետ գիւղատնտեսութեան վերաբերեալ բոլոր հարցերի մասին զրոյցներ անել:

6) Դպրոցների պակասորդը լրացնելու համար տէրութիւնը բացած ունի և մի շարք փորձնական կայարաններ, այն է՝ Վէննայում—գիւղատնտեսական—քիմիական կայարան, Կլոստէրնէյրուրգում՝ գինեգործական և այգեգործական, Հերցում՝ շերամապահական և գինեգործական, այսպէս էլ զանազան տեղերում դպրոցներին կից կան փորձնական կայարանների բաժանմունքներ, օրինակելի սնկանոցներ, այգիներ, ագարակներ:

Գիւղատնտեսական դպրոցների և թէ առհասարակ գիւղատնտեսութեան վերայ հսկողութիւնը յանձնուած է երկրագործութեան նախարարին, որը ամեն մի նահանգում վերատեսուչներ ունի նշանակած, որոնց պարտականութիւնն է՝ ա) հաշիւ տալ իր տեսչութեան յանձնուած չրջանի գիւղատնտեսութեան վիճակի մասին. բ) հսկել այն դրամական հաշիւների վրայ, որ տէրութիւնը բաց է թողում իբրեւ նպաստ գիւղատնտեսութեան այլ և այլ ճիւղերի զարգացման համար և միաժամանակ հաշիւ ներկայացնել թէ որչափ այդ նպաստը ծառայել է իր նպատակին. գ) հսկողութիւն ունենալ տէրութեան բոլոր ձեռնարկութիւնների վրայ գիւղատնտեսութիւնը բարւոք վիճակի մէջ դնելու համար. դ) բացառութիւններ տալ ժողովրդին տէրութեան կողմից գիւղատնտեսութիւնը

բարձրացնելու համար եղած ձեռնարկութիւններին. և և) իրեն ներկայացուցիչ նախարարութեան, ներկայ գտնուել գիւղատնտեսական ընկերութիւնների և թէ երկրագործական միութիւնների նիստերում:

Նախարարութեան աջակցութիւն են ցոյց տալիս ֆէրէյները, այն է երկրագործների միութիւնները, ընկերութիւնները և գիւղատնտեսական խորհուրդները, որոնք թէ գիւղատնտեսական դպրոցներ են պահում, թէ տնկանոցներ և թէ թոշակ տալիս չունենոր երկրագործներին ու վարժապետներին գիւղատնտեսական դպրոցները և այլ հաստատութիւնները այցելելու:

Իսկ թէ ժողովրդական դպրոցը ինչ մասնակցութիւն ունի գիւղատնտեսական գիտութիւնները տարածելու մէջ, բաւական է ասել, որ 1888 թուին Աւստրա-Հունգարեան ունէր 34,172 դպրոց, 45899 ուսուցիչներով և 4,012,673 աշակերտներով: Այդ դպրոցներից մեծագոյն մասը գիւղական դպրոցներն են, որոնց դրուած է մի մի կտոր հողաբաժին, այնքան՝ որ ուսուցիչը ինքը միայնակ կամ մի երկու բանւորների օգնութեամբ կարողանայ մշակել, նրանից շատ ժամանակ չխլուի և իր ուղղակի պարտականութիւնից չհեռանայ, այն է՝ երեսներին կրթելու և մարդու անհրաժեշտ գիտութեանց ընդհանուր հիմունքների հետ ծանօթացնելու:

Դպրոցին կից հողաբաժին յատկացնելը գլխաւորապէս երկու նպատակաւ է արուած, մին՝ որ ամեն մի գիւղում օրինակելի անտեսութիւն լինելով, կարելի լինի գիւղացիներին համար իբրև օրինակ ծառայել, երկրորդ՝ ուսուցչին հնարաւորութիւն տալ իր ստացած չափաւոր ուժի թերին այդ բանով լրացնել, Հէնց դրա շնորհիւ էլ ուսուցիչը աւելի տաք սրտով է կապում դպրոցի հետ և երկար տարիներ միեւնոյն գիւղում մնում. այդպիսով թէ դպրոցական գործն է առաջ դնում և թէ գիւղացու աչքում ուսուցիչը հեղինակութիւն ստանում: Գիւղական ուսուցչի վրայ գիւղատնտեսութեան վերաբերեալ հետեւեալ պարտականութիւնները կան՝ ա) դպրոցին յատկացրած հողաբաժնի հոգատարութիւնը, նրա կանոնաւոր մշակութիւնը. բ) համադիւղացիների մէջ գիւղատնտեսական գիտութիւնների տարածելը և զանազան վարչութիւններին

կողմից գիւղատնտեսութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կատարելը:

Տեսնենք աւելի մանրամասը թէ գիւղական ուսուցիչը ինչ ձևով է տանում իր վրայ դրուած պարտականութիւնները:


1. Թէ ի՞նչ ձևով է տարում դպրոցի հողաբաժնի վրայ եղած ճնշումները:

Դպրոցին յատկացրած հողաբաժինը թողնուած է ուսուցչի լիակատար իրաւանց. այսինքն նա կարող է ըստ իւր հայեցողութեան, որչափ հնարաւոր է, կանոնաւոր մշակութիւն անել: Մշակութեան բոլոր անհրաժեշտ ծախքերը ուսուցչի պարտականութիւնն է և դրա փոխարէն ուսուցիչը ստանում է նրա բոլոր արդիւնքը, Շատ բնական է, որ այդպիսի պայմաններում ուսուցիչը շահագրգռուած է և նա անդադար աշխատում է անտեսութիւնը կատարելագործելու և օրինակելի դարձնելու, որով և իրագործուած են վերոյիշեալ երկու նպատակները:

Ուսուցչի անտեսութիւնը պէտք է ասել, որ նոյնն է, ինչ որ գիւղական ժողովրդին. այն տեղերում ուր գլխաւորապէս հացաբոյսերի մշակութիւնն է և անասնապահութիւնը, ուսուցիչներն էլ այդ ճիւղերով են պարագլուխ. տաւարի քանակը սովորաբար 2—3 կթանից դէնը չէ անցնում, մի քանի խոզ, ձի եւն: Բացի գիւղատնտեսութեան այդ երկու ճիւղերը, միևնոյն շրջանում, նայելով տեղական պայմաններին, ուսուցիչները պարագլուխ են նաև գայլուկի (չարմաշուղի, ХМБЛБ) մշակութեամբ, անասնապահութեամբ, այգեգործութեամբ, մեղուապահութեամբ, ունենում են բանջարանոց և սովորաբար ծաղկանոց թէև փոքր չափով:

Վերոյիշեալ անտեսութեան ախարը գլխաւորապէս տէրութեան հիւսիսային նահանգներումն է, քիչ հարաւային մասերում առաջնակարգ տեղը բռնում են՝ 1) այգեգործութիւնն ու բանջարանոցները, 2) գինեգործութիւնը, 3) չերամապահութիւնը և 4) մեղուապահութիւնը, իսկ աւելի հարաւային մասերում նարնջի և ձիթապտղի մշակութիւնը:

Հարաւային նահանգների դպրոցները սովորաբար ունենում են մրգաբեր այգի և վազի մշակութիւն, իսկ այն կեդրոններում, որտեղ չերամապահութիւն կայ, նաև թթիւներ:



4706-53

Դպրոցին յատկացրած հողաբաժինը առհասարակ այնքան փոքր է լինում, որ ուսուցիչը ինքն է միայն պարապում, առանց ուրիշի մասնակցութեան, բայց երբ այնքան մեծ է, որ նա միայնակ չէ կարողանում աշխատել, վարձում է բանւորներ կամ իրեն օգնութեան է կանչում բարձր բաժանմունքի աշակերտներին, որոնց տարիքը 12—14-ից պակաս չէ: Բայց յամենայն դէպս ուսուցիչը իր գլխաւոր ուղադրութիւնը դարձնում է աշակերտների կրթութեան վրայ և ի նկատի ունի նրանց շահերը:

2) Ուսուցչի համագիւղացիների մեջ գիւղատնտեսական տնտեսութիւններ տարածելը եւ զանազան ասեանքներից յանձնարարութիւններ կատարելը: Առաջինը կատարւում է հէնց իրենց աշակերտների միջոցաւ, երբ նրանք դպրոցի ագարակում գործնականապէս պարապում են ու տեղն ու տեղը լսում այս ու այն գործողութեան վերաբերեալ բացադրութիւնը:

Բացի այդ ուսուցիչը իր գիտութեամբ ու հմտութեամբ աւելի բարձր լինելով քան համագիւղացիները և օրինակելի կերպով տանելով իր տնտեսութիւնը, կարող է թէ նրանց և թէ իր աշակերտներին խորհուրդներ ու ցուցմունքներ տալ գիւղատնտեսական այս ու այն ճիւղի վերաբերութեամբ, թէ և գիւղատնտեսական այս ու այն ճիւղի վերաբերութեան սահմաններից դուրս օրէնքով այդ նրա պարտականութեան սահմաններից դուրս է: Վերջապէս շատ դպրոցներում ուսուցիչները դասախօսում են թէ ընդհանուր գիւղատնտեսութիւն և թէ մասնաւորապէս նրա ճիւղերից մին կամ միւսը*:

Ինչ վերաբերում է գիւղական ուսուցիչների վրայ դրուած յանձնարարութիւնների կատարմանը, յանձնարարութիւններ, որ առհասարակ դրւում են այնպիսի վստահելի անձանց, որոնք յայտնի են գիւղատնտեսութեան այլ և այլ ճիւղերի մէջ ունեցած տեսական գիտութեամբ, դրանցից մեծապէս չահւում են թէ երկրագործութեան նախարարութիւնը, թէ գիւղատնտեսական ընկերութիւնները և թէ երկրագործների միութիւնները: Այդ յանձնարարութիւնները

*) 1872 թուականին ըստ Ի. Ի. Մեշչերսկու 1900 դպրոցներում աւանդուել է ընդհանուր գիւղատնտեսութիւն. 5565 դպրոցներում — այգեգործութիւն, 4330 դպր. մեղուապահութիւն եւ 980 դպրոցներում՝ շերամապահութիւն:

այս տեսակ են լինում նախարարութեան կամ ընկերութիւնների կողմից:

ա) Գիւղական ուսուցիչների վրայ պարտականութիւն է դրւում մի շատ աննշան վարձագրութեամբ հսկողութիւն ունենալ հասարակութեան պատկանող մրգեղէնի ու թթենիների տնկանոցների վրայ:

բ) Գիւղական վարժապետներին բաժանւում են պտղատու ծառերի ամենալաւ տեսակները այն գիտաւորութեամբ, որ նրանք էլ իրենց կողմից համագիւղացիներին կտրոններ բաժանեն պատուաստի համար և իրենց դիմած ժամանակը գնան պատուաստելու նրանց ծառերն ու թթենիները սահմանուած որոշ վարձագրութեամբ:

գ) Գիւղական ուսուցիչներին յանձնարարւում է համագիւղացիներին ծանօթացնել ընտանի կենդանիների և բոյսերի զանազան հիւանդութեանց և վնասակար միջատների և նրանց դէմ մաքառելու նոր միջոցների հետ:

դ) Յանձնարարւում է երբեմն նրանց ծանօթացնել հողատէրերին այս ու այն նոր կամ կատարելագործուած մշակութեան եղանակի հետ, կամ գիւղատնտեսութեան մի նոր ճիւղի հետ:

ե) Շատ գիւղական ուսուցիչների դրւած են մանրագիտական և նրանք պարտական են մանրագիտական քննութիւն կատարել համագիւղացիների չերամի ձուտների (սերմի) վրայ, հսկողութիւն ունենալ տեղական շերամապահութեան ընթացքում և մասնաւորապէս հետեւել չերամի որդի հիւանդութիւններին:

զ) Վերջապէս գիւղական ուսուցիչներին յանձնարարւում է վիճակագրական տեղեկութիւններ և զանազան գիտողութիւններ հաւաքելու մի մասը:

Վերոյիշեալ յանձնարարութիւնները կատարելը թէ և ուսուցիչների պարտքը չէ, բայց նրանք սիրով են կատարում, մանաւանդ որ ամեն մի այդպիսի յանձնարարութիւն անվարձ չէ մնում և ուսուցիչը թէ և փոքր, բայց այնուամենայնիւ մի բան ստանում է:

Այդպիսով երկրագործութեան նախարարութիւնը ի դէմս գիւղական ուսուցիչների իրեն շատ օգտակար օգնականներ ունի թէ գիւղատնտեսական գիտութիւնները նրանց միջոցաւ տարածելու և թէ առհասարակ գիւղատնտեսութեան զարգացմանը նպաստելու:

ժիշտ է տարրական դպրոց աւարտող 14—15 տարեկան աշակերտը այնքան պաշար և գործնական փորձառութիւն չունի, որ անկախ կերպով իր համար տնտեսութիւն սկսէ, նրան դեռ շատ բան է պակասում, բացի այդ գիւղի մէջ եղած հասակաւորները, որոնք դպրոցի երեւ չեն տեսած, նոյն պէս մի նոր բան սովորելու հակամէտ են, բայց այդ թերին ևս լրացնում է նախարարութեան չորս դասեան սկզբնական դպրոցներին կից բացուած լրացուցիչ գիւղատնտեսական բաժանմունքը, որտեղ կիւրակի կամ տօն օրերին, երբ գիւղականները աւելի ազատ ժամանակ ունեն, լինում են գիւղատնտեսական դրոյցներ ու դասախօսութիւններ և մուտքը ազատ է ամենքի համար: Այդտեղ մասնագէտ ուսուցիչը դասախօսում է ընդհանուր գիւղատնտեսութիւնից կամ նրա այս ու այն ճիւղից, բացատրում, ցոյց տալիս գործնականապէս գործադրելու եղանակը, ի ցոյց հանում գործիքը, եթէ չկայ, նրա կաղապարը և այլն:

Դասախօսութիւնները դպրոցներից մի մասում լինում են ամբողջ տարին, շաբերը ձմեռը և չատ քչերը միայն աւուր: Ժողովրդական սկզբնական դպրոցներին կից հիմնուած մանուկ ժողովրդական սկզբնական դպրոցները ունեն իրենց այդպիսի գիւղատնտեսական բաժանմունքները ունեն իրենց շատ օգտակար կողմերը: Դրանք աւելի բարձր են կանգնած քան այն գիւղական դպրոցները, որոնք հողաբաժին ունեն և կառավարւում են ուսուցչի ձեռքով: Այդպիսի բաժանմունք հարկաւ յաճախում են այն անձինք, որոնք չնայելով իրենց երկարամեայ անձնական փորձերին, այնուամենայնիւ լրիւ չեն գտնում իրենց ունեցած պաշարը և առանց որ և է ակնկալութեան կամ ստիպման սիրով հետևում են դասախօսութիւններին այդ թերին լրացնելու: Բացի այդ, այդ բաժանմունքներում քանի որ դասախօսութիւնները որոշ ծրագրով են տարւում, սխառմաստիքաբար և տեղական գիւղատնտեսութեան պահանջներին յարմարեցրած, ուստի շատ քնական է, որ գիւղացին իր մշակութեան գործերից ազատ ժամանակը յաճախելով, հնարաւորութիւն ունի աւելի յաջող կերպով իր գիտութիւնը ընդարձակելու, քան այն ժամանակ երբ հարկ եղած դէպքում է միայն նա գիտնում ուսուցչին այս ու այն բացառութիւնները խնդրելու:

Բ. Ժողովրդական դպրոցի ուսուցիչներին ինչպէս են նախապատրաստում գիւղատնտեսութեամբ պարապելու եւ դասաւանդելու:

Երկրագործութեան նախարարութիւնը ուսուցիչներին վրայ պարտաւորութիւն դնելով թէ տնտեսութեամբ պարապելու և թէ այս ու այն ճիւղի վերաբերութեամբ տեղեկութիւններ տալու գիւղական ժողովրդին, նա միաժամանակ հոգացել է և նրանց ծանօթացնելու գիւղատնտեսութեան հիմունքների հետ և նրանց գիտութեան պաշարը աւելացնելու հետևեալ միջոցներ տալ.

1) Այն մանկավարժական դպրոցներում, որ ժողովրդական դպրոցների նամար ուսուցիչներ են պատրաստում, աւանդւում է և գիւղատնտեսութիւնը:

2) Գիւղատնտեսութեան վերաբերեալ առանձին դասախօսութիւններն է նշանակում չրջիկ գիւղատնտես ուսուցիչների միջոցաւ:

3) Առանձին դասնթացներ է նշանակում գիւղատնտեսութեան այլ և այլ ճիւղերի վերաբերութեամբ մասնագիտական հաստատութիւններում:

4) Մասնագէտներ է ուղարկում տէրութեան այս կամ այն մասը և յատուկ դասնթացներ կազմում այս ու այն ճիւղերի վերաբերութեամբ: Եւ այդ ամենի միակ նպատակը կայանում է նրա մէջ, որ այն ուսուցիչները, որոնք շատ ու քիչ արգէն հասկացողութիւն ունեն գիւղատնտեսութիւնից և պարապուել են նրանով, կարողանան առանց երկար ժամանակ կորցնելու հարկաւոր գիտութիւնը ձեռք բերել: Դրա համար էլ դասնթացները նշանակում են երկու, երեք շաբաթ, մի ամիս կամ քիչ աւել: Համեմատ նշանակուած ժամանակամիջոցին դասնթացն էլ լինում է ընդարձակ կամ կարճ. յամենայն դէպս նա իր մէջ բովանդակում է առարկայի էական մասը և հաղորդում է առանց երկարաբանութեան այն ամեն տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են ուսուցչի համար: Այդ դասախօսութեանց ժամանակ ուսուցիչները միշտ ծանօթանում են այն բոլոր գործնական պարապմունք, որոնք անհրաժեշտ են նրանց գիտնալու:

1. Թե ինչ ձեւով է մանկավարժական դպրոցների գիւղա-
սնտեսական բաժինը դրուած:

Աւստրա—Հունգարիայի 144 մանկավարժական դպրոց-
ներին կից գիւղատնտեսական դասընթացները ժամանակա-
ւոր կամ մշտական ընդթ ունեն և վերաբերում են թէ ընդ-
հանուր գիւղատնտեսութեան և թէ նրա առանձին ճիւղերին.
առանձին ուշագրութիւն են դարձնում ինտենսիւ տնտեսու-
թեան վրայ—այն է այգեգործութեան, գինեգործութեան, շե-
րամապահութեան և երկրագործութեան: Եթէ նախարարու-
թիւնը ցանկանում է, որ գիւղական ուսուցիչները պարա-
պուն գիւղատնտեսութեան այս կամ այն ճիւղով, լրւատու-
րութեան մինիստրութեան հետ համաձայնութիւն կայա-
ցնելով, զանազան մասնագէտներ է ուղարկում մանկավար-
ժական դպրոցներում այս ու այն ճիւղի վերաբերութեամբ
դասընթացը անցնելու: Եւ այս ամենալաւ միջոցն է գիւղա-
կան ուսուցչին իրեն ցանկացած գիւղատնտեսութեան ճիւղի
հետ ծանօթանալուն, քանի որ մանկավարժական դպրոցների
գլխաւոր նպատակն է՝ գիւղական դպրոցների համար ուսու-
ցիչներ պատրաստել:

2. Շրջիկ գիւղացիներ ուսուցիչները (Վանդերլերի):

Շրջիկ ուսուցիչների կարգացուելիք դասնթացի համար
տեւութիւնը բաժանուած է որոշ շրջանների և ամեն մի
շրջանը յանձնուած է առանձին շրջիկ-ուսուցչի: Այդ պաշ-
տօնը սովորաբար մշտական է: Շրջիկ-ուսուցիչները պաշտօն
ունեն կետրոնական վարչութեանց մէջ բայց նրանք ենթարկ-
ւում են լուսաւորութեան նախարարութեան անմիջական
տնօրէնութեան: Նրանք երբեմն լինում են և գիւղատնտե-
սութեան դպրոցների ուսուցիչներ: Շրջիկ ուսուցչի պաշտօնը
սովորաբար տալիս են այն երիտասարդներին, որոնք յատկա-
պէս գիւղատնտեսական կրթութիւն են ստացել և բարձրա-
գոյն երկրագործական դպրոցը աւարտել:

Ամեն տարի շրջիկ ուսուցիչը նախապէս կազմում է իր
կարգալիք դասընթացի ցուցակը և ներկայացնում երկրագոր-
ծական մինիստրին հաստատութեան: Դասընթացը լինում է

առհասարակ ընդհանուր գիւղատնտեսութեան վերաբերու-
թեամբ, բայց առաւելագէս տեղական այս ու այն աւելի
կարևոր հարցի պարզաբանելուն: Շատ անգամ նախարարու-
թիւնը յանձնարարում է չրջիկ ուսուցչին արտաքոյ հաս-
տատուած դասընթացի, այս կամ այն տեղերում մասնագի-
տական ճիւղը անցնելու: Եթէ նա բաւականաչափ ծանօթ է
լինում որ և է մասնագիտական առարկայի, նախապէս նա
ուղարկւում է այդ առարկան լսելու այն դպրոցում, որը
համապատասխան է նրա ուղածին: Այդ դէպքում նա առան-
ձին թոշակ է ստանում և պարտաւոր է այդ առարկայից
յաջող կերպով քննութիւն բռնելու վկայականը ներկայացնել,
հակահակ դէպքում, թոշակը յետ է պահանջուում:

Առհասարակ նախարարութիւնը առանձին ուշագրութիւն
է դարձնում, որ շրջիկ ուսուցիչները կատարելապէս նախա-
պատրաստուած ու փորձառու ուսուցիչներ լինեն, որ կարո-
ղանան ժողովրդին կարևոր տեղեկութիւնները հաղորդել:

Շրջիկ ուսուցիչները այս ձեւով են կատարում իրենց
պաշտօնը: Դեռ ամառը չսկսուած՝ գիւղական հաստատու-
թիւններին ցրում են իրենց դասախօսութեանց ցուցակները
և յայտարարում թէ որ օրը և որ գիւղում կլինի ինքը և ինչ
առարկայ կընտրէ դասախօսելու: Դասախօսութեանց համար
նշանակւում են կիրակի և տօն օրերը պատարագից յետոյ:
Դասախօսութեան տեղը սովորաբար ընտրում են ամենա-
մարդաշատ ու կարելոյն չափ կեդրոնական գիւղը: Շրջիկ
ուսուցչի նշանակած ժամանակին հաւաքւում են թէ գիւղա-
կան ուսուցիչները և թե հասարակ ժողովուրդը: Շրջիկ ու-
սուցիչը ունի կիրքներին հասկանալի ձեով նախ բացատրում է
դասախօսութեան օրուայ նիւթը և կթէ հնարաւորութիւն
ունի, ցոյց է տալիս և այդ ամենը գործնականապէս:

Դրանից յետոյ նա առաջարկում է ունիլընդիրներին
հարցումներ տալ իրեն և ինքը սկսում է բացատրական զրոյց-
ներով պարզաբանել: Այդ դասախօսութեան ժամանակ ներկայ
են լինում բոլոր շրջակայ դպրոցների ուսուցիչները, որոնց
թոյլագրուած է դասախօսութեանց որոշուած ժամանակամի-
ջոցում իրենց տեղերից հեռանալ:

Բացի այդպիսի ընդհանուր դասախօսութիւնները, թէ
ուսուցիչների և թէ գիւղացիների համար, շրջիկ ուսուցիչների

վրայ պարտականութիւն է տրուած գիւղական ուսուցիչներին համար գիւղատնտեսական այլ և այլ հարցերի վերաբերութեամբ մասնագիտական դասընթաց սարքելը: Դրա համար ժողովրդական դպրոցի ուսուցիչները հրաւիրուում են կեդրոնում դռնուած այն գիւղատնտեսական դպրոցը կամ փորձնական կայարանը, որը աւելի մօտ է նրանց բնակավայրին: այդտեղ չըջիկ ուսուցիչը իւր ձեռքի տակ աւելի օժանդակիչ միջոցներ ունենալով, մանրամասնաբար և աւելի լիակատար կերպով կարգում է իւր դասընթացը: Վերջացնելով դասախօսութիւնը մի գիւղատնտեսական դպրոցում կամ փորձնական կայարանում, չըջիկ ուսուցիչը գնում է երկրորդը, երրորդը, մինչև որ իր չըջանի բոլոր ուսուցիչներին նա ծանօթացնում է նախարարութեան առաջադրած առարկայի հետ: Այն դէպքում, երբ ժողովրդական դպրոցները չառ մեծ հեռաւորութեան վրայ են գիւղատնտեսական դպրոցներից ու կայարաններից, այն ժամանակ չըջիկ ուսուցիչը ընտրում է կեդրոնում գտնուած աւելի յարմար գիւղը և ժողովրդական դպրոցում է կատարում իր դասախօսութիւնը:

Այդպիսի դասախօսութիւնները սովորաբար մի շարքութից աւելի չեն տեսում և լինում են ուսուցիչների ազատ ժամանակներին: Չըջիկ ուսուցիչը պատելով իր չըջանի բոլոր գիւղերը, նա այցելում է այն ամեն դպրոցները, որոնք տնտեսութիւն ունին, դիտում է և հարկաւոր բացադրութիւններն ու տեղեկութիւնները տալիս ուսուցչին: Այդպիսի այցելութիւնները ուսուցչի վարած տնտեսութեան վրայ երբեք կանաւորլի կամ հսկողութեան բնոյթ չունին և տնտեսութեան պակասութիւնների կամ ուսուցչի սխալների մասին սովորաբար բացի չըջիկ ուսուցիչը ուրիշ ոչ ոք չէ իմանում: Այդ քննութիւնը բացառապէս ծառայում է ուսուցիչ — տնտեսի օգտին, ուստի հասկանալի է, որ չըջիկ ուսուցիչը գիւղական ուսուցչի համար մի ցանկալի հիւր է, որին ինքն է հրաւիրում իր տնտեսութեանը նայելու և նրա պակասութիւնները ցոյց տալու:

Առհասարակ չըջիկ ուսուցիչները մեծապէս նպաստում են գիւղական վարժապետներին իրենց խորհուրդներով ու ցուցմունքներով:

3. Ուսուցիչների համար դասընթացներ մասնագիտական հաստատութիւններում:

Ժողովրդական դպրոցների ուսուցիչները երկու կերպ են մասնակցում այդ դասընթացներին, կամ նրանց ուղարկում են փորձնական կայարանների կամ գիւղատնտեսական դպրոցների ընդհանուր մասնագիտական կուրսերը ըսլու կամ նրանց համար այդ հաստատութիւններում յատուկ կուրսեր են նշանակում և զանազան տեղերից ժողովրդական դպրոցների ուսուցիչներին լսելու ուղարկում: Առաջին դէպքում նշանակում են այնպիսի ժամանակ, որ աւելի յարմար է հաստատութեան համար, երկրորդ դէպքում ուսուցիչների յարմարութիւնը ի նկատի ունին, բայց երկու դէպքումն էլ դասընթացը աւել կամ պակաս չափով նոյնն է թէ բովանդակութեան և թէ ընդարձակութեան կողմից:

Առհասարակ այդպիսի դասախօսութիւններ սարքելը մասնաւորապէս գիւղատնտեսական այս կամ այն ճիւղի վերաբերութեամբ, գիւղատնտեսական փորձնական կայարանների պարտականութիւնն է, որովհետեւ դրոնք պարտական են որոշուած ճիւղի վերաբերեալ դիտնական հետազոտութիւններով պարապել, կարեւոր փորձերը անել և իրենց աշխատութեան հետեանքը դասախօսութեան միջոցաւ գիւղատնտեսներին հաղորդել: Դրա համար էլ դասախօսութիւնները ընդհանրապէս փորձնական կայարաններին կից են կազմուած:

Ամեն մի դասընթացի համար նախապէս յայտարարում է լրագրութեան մէջ, տպագրում նրա ծրագիրը ու յետոյ ծանուցանում վարչութիւններին, խնդրելով որ ուսուցիչներ ուղարկեն: Եւ որովհետեւ ուսուցիչները առհասարակ ունեւոր չեն և անարգարութիւն է նրանցից պահանջել իրենց հաշով գնալու և նրանցից շատերը նիւթականի կողմից դժուար կացութեան մէջ կընկնէին, որ և առիթ կտար նրանց կողմից անբաւականութեան և կուրսերը յաճախելու արգելք կհանդիսանար, ուստի և ուսուցիչները շատ սակաւ բացառութեամբ գնում են երկրագործական ու լուսաւորութեան նախարարութեանց հաշով կամ գաւառական այս ու այն ընկերութիւնների ու հաստատութիւնների ու երկրագործական միու-

թիւները հաշուել Այդ հաստատութիւնները, նայելով գնալու տեղի հեռաւորութեան, ուսուցիչներին 50—100 դուրդէն ամսական թոշակ են նշանակում: Թոշակը տալիս են հետեւեալ կերպով՝ $1/2$ մասը վճարում են ուսուցչի ճանապարհուէլուց, մնացածը ուղարկում են այն հաստատութեան, որտեղ պիտի գնայ: Վերջինս թոշակի $1/4$ -ը վճարում է նրա տեղ հասնելուց, իսկ մնացածի կէս մասը տալիս է երբ ուսուցիչը վերջացնում է դասընթացը և յաջող քննութիւն բռնում: Կայարանը ուսուցիչների բոլոր ստացագրերը ուղարկում է այն հաստատութեան, որոնք թոշակ են նշանակել և հաղորդում յաջող քննութիւն բռնելու մասին, իսկ ուսուցիչները իրենց կողմից ներկայացնում են քննութեան վկայականները:

4. Ուսուցիչների եամար յաճուկ դասընթացներ տեսնելուց այս ու այն կողմը ուղարկուած մասնագետների ձեռնով:

Այն դէպքում, երբ ուսուցիչներին մասնագիտական հաստատութիւններ ուղարկելը գիտութեան թիւներին է հանդիպում, օրինակ փորձնական կայարաններից կամ գիւղատնտ. դպրոցներից հետո լինելու դէպքում, որը կապուած է հարկաւ և մեծ ծախքերի հետ, բացի այդ երբ ուսուցիչները անկարող են դպրոցները թողնել և մի շարքից աւել հեռանալ, այդ և նման հանգամանքներում նպատակայարմար է ճանաչուած փորձնական կայարանների տեսուչներին կամ միւս մասնագէտներին նրանց մօտ ուղարկել: Այդ դէպքում դասընթացը աւելի գործնական հողի վրայ է լինում և միայն կարեւոր տեսական, բացառութիւնները տրւում և այդ տեսում է ոչ աւելի քան մի շարքով: Դասախօսութիւնները վերջացնելուց յետոյ քննական զրոյցներ են լինում այն նպատակաւ, որ իմացուի թէ որչափ են ուսուցիչները իւրացրել դասախօսութիւնը և լրացնում նրանց թերութիւնները բացառութիւններով:

Բացի ժողովրդական դպրոցները, գիւղատնտեսական գիտելիքները տարածելու մէջ երբեմն մասնակցում են և հոգեսր դպրոցները:

Այդ վերոյիշեալ միջոցներով թէ ուսուցիչներն են լրիւ տեղեկութիւն ստանում գիւղատնտեսութեան մասին, թէ

ուսուցիչների միջոցաւ երկրագործ ժողովրդի մէջ կանոնաւոր գիւղատնտեսութիւնը լայն ծաւալ ստանում և թէ ժողովրդական դպրոցի մի քանի միլիոն աշակերտները երկխալութիւնից ծանօթանալով երկրագործական տարրական սկզբունքներին ու օգտակար տեղեկութիւններ քաղելով՝ ապագայում գործադրում են իրենց տնտեսութեան մէջ, թերին լրացնելով թէ չորսամեայ դասընթաց ունեցող դպրոցների գիւղատնտեսութեան բաժանմունքներում, թէ չբջիկ ուսուցիչներին լսելով, թէ գիւղական դպրոցի ուսուցիչների ձեռքով տարած տնտեսութեան հետեւելով, որոնցից միշտ օգտակար ցուցմունք ու խորհուրդներ են ստանում: Կարելի է հաստատարար ասել, որ Աւստրա-Հունգարիան գիւղատնտեսութեան կատարելագործութեան մէջ իւր ունեցած յաջողութիւնը գլխաւորապէս պարտական է վերոյիշեալ միջոցներին և ժողովրդական զրոյցին, որ գիւղատնտեսական գիտութիւնները տարածելու գործի մէջ մեծ մասնակցութիւն ունի:

ՖՐԱՆՍԱ.

Ֆրանսայում երկրագործ ժողովրդի մէջ գիւղատնտեսութիւնը զարգացնելու համար մի մի փորձեր են եղած դեռ 1763 թուականներից, բայց տէրութիւնը լուրջ ուշադրութիւն դարձրեց 1848 թուականին, երբ իր ձեռքն առնելով գիւղատնտեսական կրթութեան գործը, որոշեց ագարակ—դպրոցներ (ferme—école) ցանցով ծածկել ամբողջ Ֆրանսան, որպէս զի երկտասարգ գիւղացիք փորձուած գիւղատնտես ագարակատէրերի ձեռքի տակ կարողանան գիւղատնտեսութեան գործնական մասը ուսումնասիրել: Սակայն այդ դպրոցները չարդարացրին իրենց վրայ դրուած յոյսերը և հետզհետէ փակուելով՝ քչերը մնացին: Այնուհետեւ տէրութիւնը ժողովրդական սկզբնական դպրոցներին ոյժ տուեց և նրանց ծրագրի մէջ մտցրեց և գիւղատնտեսական առարկաները, որոնց մասին կիսունք ստորև:

Ֆրանսայում իբրեւ բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցներ համարուած են ա) Փարիզի ազգային գիւղատնտեսական ձեռնարանը, որը բացուած է 1876 թուականին, ուր

աւանդում է գիւղական տնտեսութիւն, փրկիքա, օգերկութեանութիւն, երկրաբանութիւն, հանքաբանութիւն, քիմիա, տեխնոլոգիա, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն և անասնապահութիւն, երկրաշափութիւն, ընդհանուր գիւղատնտեսութիւն, համեմատական գիւղատնտեսութիւն, անասնապահութիւն, բանջարաբուծութիւն, այգեգործութիւն և վաղի մշակութիւն:

Ուսման ընթացքը երկու տարի է: Քննութեամբ աւարտողները ստանում են վկայական: Ամեն տարի ամենայնաքաջագէտ աշակերտներից երկուսին աւարտութիւնը իր հաշուով ուղարկում է տէրութեան մէջ կամ արտասահմանում երեք տարուայ ընթացքում այս կամ այն ճիւղը ուսումնասիրելու, կատարելագործելու:

Օտարազգիները կարող են ձեռնարան ընդունուել թէ իբրեւ աշակերտ և թէ իբրեւ ունկնդիր: Այս ու այն առարկայի հետ գործնականապէս ծանօթանալու համար դպրոցը կազմում է զրոսանքներ (էքսկուրսիաներ) և այցելութիւններ օրինակելի ագարակների, գործարանների, սնկանոցների կն:

բ) Երկրագործական ագգային դպրոցները Գրինիոնի, Գրանփուանի և Մոնպելիայի գրեթէ նոյն ծրագիրն ունին ինչ որ Փարիզի ձեռնարանին և նոյն իրաւունքները: Այդ դպրանոցներում ուսումը աւանդում է թէ տեսականապէս և թէ գործնականապէս. ուսման ընթացքը երկու և կէս տարի է. այդ դպրանոցները գիշերօթիկ են, բայց ընդունում են և երթևեկներ: Յաջողութեամբ աւարտողը կարող է երկու տարի մնալ նոյն դպրոցում իբրեւ օգնական ուսուցչապետի և կամ տէրութեան հաշուով դնալ կատարելագործելու իր ընտրած մասնագիտութիւնը: Մոնպելիայի դպրոցը պէտք է ասել, որ առանձին ուշադրութիւն է դարձնում վաղի մշակութեան, գինեգործութեան և շերամապահութեան վրայ քան միւսները և այդ տեսակէտից աւելի նպատակայարմար է կովկասցիներին:

1. Ագարակ—դպրոցների կազմակերպութիւնը:

Ագարակ—դպրոցները բացուած են այն կալուածների կամ տնտեսութեանց կից, որոնք կառավարւում են հմուտ տէրերի կամ կառավարիչների ձեռքով և տնտեսութիւնը

դրուած է օրինակելի հիմքերի վրայ: Այդտեղ բոլոր աշխատութիւնները կատարում են աշակերտները, որոնք որոշ վարձագրութիւն են ստանում իրենց աշխատութեան համար: Այդ ագարակ—դպրոցները երկու նպատակի են ծառայում, մին՝ օրինակելի կերպով հողի մշակութիւնը, երկրորդ գիւղատնտեսութեան գործնականապէս աւանդումը, բայց էական նպատակը գործնական հմուտ հողագործների պատրաստելն է, որ կարողանան խելացի կերպով թէ իրենց սեպական կամ վարձովի հողը մշակել, թէ լինել կալուածներում կառավարիչ, օգնական կամ վերակացու:

Աշակերտները ինչպէս հասարակ մշակներ դասընթացի ամբողջ ժամանակամիջոցում մասնակցում են բոլոր գիւղատնտեսական աշխատութիւններին: Աշակերտների թիւը կախուած է կալուածքի ընդարձակութիւնից և թէ նրա շահագործման եղանակից: Այն կալուածքը, ուր գլխաւոր պարագմունքը անասնապահութիւնն է, ամեն հինգ դեսեստին տեղին միայն մի աշակերտ է պահում: Մօտ 100 դեսեստին ունեցող կալուածքը, որտեղ հացաբոյսերի մշակութիւնն է կազմում գլխաւոր ճիւղը, կարող է ընդունել 30 աշակերտ, վերջապէս այն կալուածքը, որ ինտենսիւ—կատարելագործուած տնտեսութիւն ունի, փոքրիկ տարածութեան վրայ կարող է շատ աշակերտ պահել:

Յամենայն դէպս աշակերտների թիւը 24-ից պակաս չէ լինում, որովհետեւ տէրութիւնը ագարակ—դպրոցին վճարում է ոչ պակաս քան 24 աշակերտի վճարը:

Բացի այդ աշակերտներից ագարակ—դպրոցը ընդունում է և երեք երիտասարդներ, որոնք պէտք է բացառապէս այգիներում և տնկանոցներում մնան և հմուտ այգեպաններ պատրաստուեն:

Գործը յաջող կերպով տանելու համար ագարակ—դպրոցներում շատ աշակերտներ չեն պահում և պահանջում են որ նրանք միշտ գնան գործնական աշխատանքի և կողմնակի բանւոր չպահեն ագարակում: Կանոնադրութեան պահանջներին համաձայն աշակերտների փրկիքական աշխատութիւնները համապատասխան պիտի լինին իրենց ուժերին և այնպէս կարգաւորուած, որ մի կողմից տնտեսութեան պահանջներին բաւականութիւն դրուի, միւս կողմից հաստատութեան գըլ-

խառնոր նպատակը իրագործուի—այն է պրօֆէսիօնալ—կրթական ուսումը:

Աշակերտները ընդունուում են ոչ պակաս քան 16 տարիքը լրացած: Այդ սահմանից դէնը անարգել ընդունուում են ամենքը, եթէ համապատասխան են և միւս պայմաններին: Դպրոցում աշակերտներին պահում են 2—3 տարի: Այդ աշակերտները դիւզական բանւորներից լինելով, որպէսզի չծանրանան ուսման ընթացքում իրենց ծնողների վրայ և ծախք չպատճառեն, միւս կողմից որպէսզի նրանց աշխատութիւնը վարձադրուի և ստանան այնքան, որքան կարող էին նրանք մի ուրիշ տեղ վաստակել, բացի այդ ագարակի տեսուչը անկարող լինելով աշակերտների խնամատարութեան և կրթութեան վերաբերեալ ծախքերը նրանց կատարած աշխատութիւններից ծածկել, դրա համար տէրութիւնը ինքն է օգնութեան հասնում, ագարակում գտնուող իւրաքանչիւր աշակերտի համար վճարելով 270 ֆրանք, թէ նրանց ուսուիւքի, բժշկութեան, վառելիքի, լուսաւորութեան, կարկատանի և թէ դպրոցական գոյքի համար: Իսկ դպրոցական չըջանը աւարտելուց, եթէ աշակերտը վկայական է ստանում, տէրութիւնը նրան միանուագ 300 ֆրանք նւէր է տալիս:

Որովհետեւ աշակերտների նիստ ու կացը միօրինակ է, միևնոյն կարգերին են հպատակուում և միանման աշխատութիւններ կատարում ամենքը, ուստի ագարակ—դպրոցները միայն մի դասարան ունին, թէև այս ու այն բացառութիւնները կան ի նկատի առնելով աշակերտների առաջ կամ յետոյ ընդունուելը, նրանց ընդունակութիւնը և լաւ վարքը:

Ագարակ դպրոցը ունի՝

Մի տեսուչ	2400 ֆրանք վարձադրութ.
Վերակացու հաշուապահ	1000—1500 ֆր. »
Այգեպան	1000—1500 ֆր. »
Գործնական պարապմանց ղեկավար	1000—1200 ֆր. »
և Անասնաբոյժ	500—800 ֆր. »

Տեսուչը նշանակուում է երկրագործական միջոցաւ կողմից, մնացած ծառայողների ընտրութիւնը, ընդունելութիւնն ու արձակելը կամ փոխադրելը թողնուած է տեսչի իրաւասութեան: Եւ այդ արուած է այն նպատակաւ, որպէսզի տեսուչը, որի վրայ պատասխանատուութիւն է դրուած և նա

բոլորովին ազատ կերպով պիտի կառավարէ ոչ միայն տնտեսութիւնը, այլ և կրթական մասը իր բոլոր ճիւղերով, ոչ մի կախումն չունենայ դրսից և կատարեալ հաւատ ունենայ դէպի իր ձեռքի տակ եղող օգնականները: Այսպիսով նա տէր ու տիրական լինելով իր տնտեսութեան ու իր հաշով տանելով գործը—նա չհանդիմանում է նրանով, որ այն անձինք, որոնք աշխատում են նրա կալուածքի տնտեսական գործերում օգնեն իրեն և իրենց վրայ դրուած բոլոր աշխատութիւնները և յանձնարարութիւնները լրիւ կատարեն:

Տեսուչը թէ դպրոցական մասն է կառավարում և թէ տնտեսական, նա տէրութիւնից օժանդակութիւն է ստանում և ոչ թոյակ: Նա իր տնտեսութիւնը պարտական է այնպէս տանել, որ կարողանայ թէ աշակերտի համար իրրի ամենալաւ կրթարանը լինի և թէ իրրի տիպար ծառայել չըջակայքի համար իր օրինակելի և արդիւնաւէտ տնտեսութեամբ:

Տեսուչը ուսումնական մասը իր վրայ առնելով նա աշակերտներին իր դրոյցներով բացադրում է տնտեսութեան կառավարելու ամենակարևոր տեսական հիմունքները միշտ խուսափելով այնպիսի վերացական տեղեկութիւններ տալուց, որոնք նրանց համար անհասկանալի են և չեն բղխում իրենց աչքի առաջ կատարուող իրական փաստերից. նա միշտ աչքի առաջ ունի, որ ագարակ—դպրոցի նպատակն է հողագործներ պատրաստել և ոչ թէ գիտնականներ:

Բացի այդ տեսչի պարտականութիւնն է ա) պահել տնտեսութեան կանոնաւոր հաշիւները. բ) առանց ուշացնելու հաշուապահական գրքերը ներկայացնել տէրութեան ագէնտներին կամ նրա ուղարկած անձանց. գ) ամեն տարեգլխի երկու ամսուայ ընթացքում նահանգապետի միջոցաւ ուղարկել երկրագործութեան միջոցաւ նախատեսուած կատարուած իր հաշիւները, կցելով գոյքի ցուցակը և տեղեկագիր գոյքի դրութեան մասին, և դ) ամեն ամսի առաջին տասն օրուայ ընթացքում հաշիւ ներկայացնել թէ տնտեսութեան մէջ ինչ աշխատութիւններ են կատարուած և դպրոցը ինչ դրութեան մէջ է:

Ագարակ դպրոցի տեսչի պարտաւորութիւնն է որոշ տարիներից յետոյ ամեն տարի իր կալուածքից այնքան արդիւնք ստանալ, որքան այդ հնարաւոր է այն չըջանում և

միւս կալուածներն են տալիս, ի նկատի առնելով ի հարկէ բացառիկ հանգամանքները: Եթէ որոշ ժամանակից յետոյ նկատուիմ է, որ տնտեսութիւնը յաջող չէ տարւում, այն ժամանակ տէրութիւնը զրկում է նրան օժանդակութիւն տալուց:

Վերակացու—հաշուապահը սովորեցնում է աշակերտներին կանոնաւոր պարզ հաշուապահութիւն, լրացնում նրանց սկզբնական կրթութեան մէջ ունեցած պակասաւոր կողմերը, ծանօթացնում հողաչափութեան, նիւթելիքովկայի հետ, և հսկում ննջարանում, սեղանատանը:

Այգեպահը աշակերտներին տալիս է ընդհանուր տեղեկութիւններ բանջարաբուծութեան մասին, և դորձնական աշխատանքների միջոցաւ ծանօթացնում այգեգործութեան գլխաւոր ձիւղի հետ, մասնաւորապէս ուշ դարձնելով ծառերի պատուաստման վրայ:

Գործնական պարապմանց ղեկավարը աշակերտներին ցոյց է տալիս դանազան դորձիքների և մեքենաների հետ վարուելու եղանակը և նրանց առաջնորդում թէ դպրոցում և թէ դաշտում:

Այս երեք անձինքը տեսչի կատարեալ իրաւանց տակն են գտնւում և կատարում են այն ամենը տնտեսութեան և դպրոցի վերաբերեալ, ինչ որ նա հարկաւոր է դառնում:

Անասնաբոյժը բժշկում է կալուածքի տաւարը և աշակերտներին սովորեցնում պարզ անդամահատութեան դորձնական եղանակների հետ, բացադրում այս ու այն սովորական հիւանդութեան երևոյթները և մինչև անասնաբոյժի հասնելը առաջին օգնութիւնը հասցնելը:

Ամեն ագարակ—դպրոց ունի իր հսկող մասնաժողովը, որը ներկայ է լինում թէ աշակերտների ընդունելութեան և թէ աւարտման քննութեան ժամանակ և իր կողմից հաշիւ է ներկայացնում երկրագործութեան միջոցներին:

Ագարակ դպրոցների տնտեսական և դպրոցական մասի վրայ հսկողութիւն ունին և գիւղատնտես տեսուչները: Առհասարակ տէրութիւնը շատ զգոյշ է վարւում այդ տիպի դպրոցներ հիմնելու և նրանց օժանդակութիւն տալու մէջ: Նա առաջ քան հրաման տալը՝ քննում է կալուածքի գրութիւնը, նրա նիւթական միջոցները, տեսչի հմտութիւնը և

աշակերտներին տնտեսութեան հետ ծանօթացնելու բնագոնակութիւնը, կալուածքի մէջ այս ու այն մշակութեան յարմարութիւնը և այդ շրջանի կարիքներին բաւականութիւն տալու բոլոր պայմանները:

Այն դէպքում երբ կալուածատէրը այս ու այն պատճառով անկարող է լինում ագարակ—դպրոցի բոլոր պարտականութիւնները կատարել, կանոնադրութիւնը թոյլ է տալիս օգնական ունենալ, որը պէտք է հմուտ լինի այդ պաշտօնին: Այդպիսի դէպքում ագարակատէրը վերապահւում է տեսչի կողմը և ստանձնում միայն թէ հսկողութիւնը դպրոցի վրայ և թէ իր օգնականի բոլոր գործողութեանց:

Դպրոցի ներքին կազմը հետեւեալն է. աշակերտների համար յատկացրուած է չորս սենեակ—ննջարան, սեղանատուն, սերտարան և հիւանդանոց: Վերակացուն կարող է տեղաւորուել ննջարանում: Գործնական պարապմանց ղեկավարը նոյնպէս չքիզ կացութիւն չունի, եթէ ընտանիք չունի, արւում է միայն մի սենեակ: Կահլարասիքը պարզ է, մի քանի սեղաններ, մի քանի արկղներ, որոնց մէջ աշակերտները պէտք է դասական պիտոյքները պահեն, պահարան այս ու այն ժողովածուի, սերմերի, հացահատիկների, հողերի տեսակների և դրատախտակ. թուղթ, գրիչ, թանաք և միւս դասական պիտոյք տալիս է տեսուչը:

Դպրոցի նիստ ու կացը, քնելը լինում է ըստ տեղական սովորութեան, որպէս զի աշակերտները դպրոցում նոր կարգերի վարժուելով ստիպուած չլինին յետոյ թողնել: Մնուելը արւում է տեսչի կողմից բաւականաչափ, բայց նա չէ տարբերում այն կերակրից, ինչ որ գործ են անում տեղական գիւղացիք: Աշակերտները քնում են ննջարանում վերակացուի հսկողութեամբ, իսկ օրապահ աշակերտները գտնում, ախոռատանը և փարախում: Հագուստը այն է, ինչ որ աշակերտը բերել է իր հետ, միայն կիւրակի օրերին կամ երբ դպրոցից ուրիշ տեղ են գնում, հագնում են որոշ ձևի զգեստ, որ հեշտ լինի նրանց հսկելը:

Ջրհատը ամենաամառ կտորից կարած բլուղ է, որ ձմեռը հագուստի վրայից են հագնում և գօտին վրայից կապում: Նոյն կտորից վարտիկն է, իսկ գլխին թաղկի գլխարկ:

Աշակերտները մնում են ագարակ—դպրոցում 2—3 տարի,

քննութիւնն են բռնում և վկայական ստացողը ազատուում է զինուորացորութիւնից։

Սակայն ազարակ—դպրոցները չնայելով ըստ երեւթիւն նպատակայարմար կազմակերպութեան, չարգարացրին տէրութեան յոյսերը, և հետզհետէ փակուելով՝ քչիւր մնացին, իսկ նրանց կատարելիք դերը իր վրայ առաւ ժողովրդական դպրոցը։

2. Գիւղացեցեական ուսումը ժողովրդական դպրոցում։

Քառասնական թուականների վերջերին Սալվանդի և Բարթիւմի Սէնտ Իւէր առաջինը առաջարկել են երկրագործութիւնը մացնել դպրոցական առարկաների շարքի մէջ, միայն 1850 թուականին թոյլագրուեց տարրական դպրոցում աւանդել, բայց ոչ իբրեւ պարտաւորեցուցիչ առարկայ։

1856 թուականի հրամանով բոլոր ուսուցչանոցներում կարգադրուեց մի ուսուցիչ պահել յատկապէս երկրագործութիւն աւանդելու։ Այս միջոցը այնքան նպատակայարմար ճանաչուեց, որ 1860 թուականին 6000 ուսուցիչ ցանկութիւն յայտնեցին, որ երկրագործութիւնը ուսուցչական դպրոցներում պարտաւորացուցիչ առարկաների շարքը մտնի, որը սակայն իրագործուեց 1866 թուականին։ Յետագայ տարիների փորձերը ցոյց տուին, թէ որչափ մեծ դեր կարող են խաղալ ժողովրդական դպրոցները գիւղատնտեսական գիտութիւնը տարածելու մէջ ու սկսեցին այդ դպրոցների մէջ գիւղատնտեսութիւնը անցնել, այնպէս որ 1874 թուին գիւղատնտեսութիւնը աւանդուում էր 8800 սկզբնական դպրոցներում և 76 ուսուցչանոցներում։

Սկզբնական դպրոցներից 900 ունէին իրենց այգիները, իսկ ուսուցչանոցներից շատերը փորձնական ագարակներ՝ սկսած 65 քառակուսի սաժէն տարածութիւնից մինչև 4 դեցեատինը։ Ֆրանսայում 1882 թուականին, ինչպէս ցոյց են տալիս վիճակագրական տեղեկութիւնները, կային 770,302 սկզբնական դպրոցներ 5,432,150 աշակերտ աշակերտունիներով։

Ֆրանսայում ուսումը պարտադիր լինելով, թէ մատակարարուող երեխաները միջոց ունին տարրական դպրոցը աւար-

տելուց յետոյ, իրենց կրթութիւնը շարունակելու համար միջնակարգ և բարձրագոյն դպրոցները մտնել, իրենց մտաւոր պաշարը առատացնել և թէ հասակաւորները, որոնց համար շատ դիւրութիւններ կան իրենց կրթութիւնը առաջ տանելու։ Հասակաւոր կանանց և տղամարդոց համար դպրոցներին կից կան առանձին դասընթացներ. 1882—3 թուականին միմիայն կանանց համար դասընթացներ եղել են 5588, որին մասնակցել են 78,120 հոգի, իսկ տղամարդոց համար՝ 24,421 դասընթացներ 427,371 հոգի։

Թէ գիւղատնտեսութիւնը ինչպէս է դրուած ֆրանսական երեք կարգի դպրոցներում, մէջ կրեւենք այդ դպրոցների ծրագիրը, այն է՝ ա) սկզբնական դպրոցի, բ) սկզբնական բարձրագոյն դպրոցի իր լրացուցիչ դասընթացով և գ) միջնակարգ դպրոցի կամ ուսուցչանոցի, որ սկզբնական դպրոցների համար ուսուցիչ և վարժուհի է պատրաստում։

1. Գիւղացեցեայի ուսուցումը սկզբնական դպրոցներում։

Սկզբնական դպրոցում երեխաները ձեռք են բերում քաջի կարևոր տեսական գիտութիւնները, նաև դանազան գործնական տեղեկութիւններ, որոնք պէտք են կեանքի համար, տւտի շատ բնական է, որ դասաւանդութիւնը այդ դպրոցներում այն ձևով տարուի, որ երեխան խելամուտ լինի իրեն շրջապատող բնութեան և տեսականի հետ զուգընթաց առաջ գնայ և գործնականը և մութ բան չմնայ նրա համար։ Սկզբնական դպրոցում դասաւանդութիւնը երեք կուրսերի է բաժանուած—տարրական, միջին և բարձր. կան և նախապատրաստական բաժանմունքներ։ Նախապատրաստականում ընդունում են 3—5 տարեկան երեխաներ, տարրական կուրսում 7—9, միջին 9—11 և բարձրում 11—13 տարեկան։ Սկզբնական դպրոցները կարող են լինել երեքդասեան, հինգդասեան և վեցդասեան։ Այդ դպրոցներում աւանդուում են՝ առողջապահութիւն և վայելուչ կենցաղավարութիւն, մարմնամարզութիւն, գինուորական մարզանք տղայոց համար, ձեռագործ աշխատանք տղայոց և աղջկերանց համար, գրել—կարդալ, ֆրանսական լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, հի-

մունք քաղաքակրթութեան, տարրական գիտելիք բնական պատմութեան, թուաբանութիւն, երկրաչափութիւն, նկարչութիւն, գիւղատնտեսութիւն, անասնապահութիւն և երգ:

Տարրական կուրսում նշանակուած են գործնական պարագմունքներ դպրոցական այգում: Միջին կուրսում դասերի նիւթ է ծառայում դասարանի մէջ կարգացածը և զբօսանքների ժամանակ տեսածները, այն է՝ հողի, պարարտացուցիչ նիւթերի, գիւղատնտեսական այս ու այն աշխատութիւնների և գործիքների վերաբերութեամբ: Եւ վերջապէս բարձրագոյն կուրսերի ընթացքում աշակերտներին աւելի մանրամասն տեղեկութիւն է տրուում գիւղատնտեսական աշխատութիւնների, գործիքների, հողերի ոռոգման կամ չորացման, բնական կամ արհեստական պարարտացուցիչ նիւթերի, վար ու ցանքի, ընտանի կենդանիների և գիւղատնտեսական հաշուապահութեան մասին:

Բացի այդ սովորեցնում են և այն էական գիտելիքները, որոնք վերաբերում են երկրի մէջ ամենեւի շատ տարածուած ու օգտակար բոյսերի կամ տունկերի խնամատարութեան, ինչպէս և պատուաստների մասին:

Սկզբնական դպրոցներում գիւղատնտեսութեան այս ու այն մասի ուսուցումը, ինչպէս և միւս առարկաներին, յարմարեցրած է այն ամիսներին, երբ տեղական գիւղատնտեսական այս ու այն համապատասխան աշխատութիւններն են լինում, օրինակ հօկտեմբերին՝ այգեկութիւն, վաղը, խաղողը, գինին, ջարդող մեքենաները, չաները, տակառները, չիչեր, չափեր, խնձոր և սիգը, գայլուկ, գարնջուր՝ նկարչութեան դասին աշակերտները նկարում են այդ դասերին վերաբերեալ պատկերները, ինչպէս տակառ, խաղող, խնձոր, տերեւ են. երգեցողութեան դասին երգում են աշնան երգը:

Նոյեմբերին՝ հողի հերկը, դռթան, ցանքս, նկարում են դռթան, փոցիս, երգում են դռթանի երգը:

Ապրիլին՝ բոյսը, սերմը, արմատը, ծաղիկը, չերամբ որդը, միջատների և թռչունների տաճ օգուտը, նկարում են ծառ, ծաղիկ, լոբի, տերեւ, երգում գարունը, այսպէս և միւս ամիսներին:

Դառնադրքերը ամեն մի կուրսի համար առանձին են և

յարմարեցրած երկխաների ըմբռնման ու հասկացողութեան փոքրահոտակների համար ձեռնարկը բաժանուած է 25 դասերի, միջին հասակի համար 36 դասերի, որ առաջին լրացումն է, իսկ հասակաւորների համար, որ աւելի մանրամասն և ընդարձակ տեղեկութիւն է բովանդակում 60 դասերի:

Աւելորդ չենք համարում մէջ բերել սկզբնական դպրոցի բարձր կուրսի գիւղատնտեսութեան վերաբերեալ դասերի բովանդակութիւնը, որ է՝

- 1) Հողի արդիւնաբերութեան եղանակները: 2) Ագարակի կազմակերպութիւնը: 3) Մշակուող բոյսերի դասաւորութիւնը: 4) Տնտեսութեան մէջ գտնուած հողերի դանազան մշակութեանց համար յատկացնելը: 5) Օրինակներ հողերի այդպիսի դասաւորութեան: 6) Հողի պարարտութեան ամենագլխաւոր աշխատութիւնները: 7) Ոռոգումը: 8) Ոռոգելու եղանակները: 9) Զրոտ տեղերի չորացնելը: 10) Հացաբոյսերի մշակութիւնը: 11) Ցորեն: 12) Գարի: 13) Հաճար: 14) Վարսակ: 15) Եգիպտացորեն, կորեկ և բրինձ: 16) Հնգկացորեն (гречиха): 17) Կարտոֆիլ: 18) Կարտոֆիլի գործածութիւնը և նրա թշնամիները: 19) Լոբու նման բոյսերը: 20) Թիւ տուղ բոյսերը՝ բամբակ, կանեփ, վուշ: 21) Զիթաու բոյսեր՝ քնջութ, արեածաղիկ, կտաւած են: 22) Ճակընդեղ: 23) Ներկատու բոյսեր և ծխախոտ: 24) Գայլուկ (хмель): 25) Տաւարի աննդի համար մշակուող բոյսեր. մարգարեախններ: 26) Լոբու տեսակ բոյսերի մշակութիւնը: 27) Հացաբոյսերի ցանքսը և ոռոտ տեսակ բոյսերի հեռ խառն: 28) Միամեայ խոտեր աննդի համար: 29) Մանդի խոտերի պահպանութիւնը: 30) Արմատապտուղ աննդի բոյսերը՝ դեղախնձոր, դազար, չաղգամ: 31) Գիւղատնտեսական հաշուապահութիւն. տնտեսութեան կաշքը և գոյքը: 32) Հաշուապահական գրքեր: 33) Տաւարապահութեան կարեւորութիւնը և նշանակութիւնը: 34) Չիեր: 25) Էշեր և ջորիներ: 36) Տաւարապահութիւն: 37) Տաւարի գլխաւոր ցեղերը: 38) Ոչխար և նրա գլխաւոր տեսակները: 39) Խոզապահութիւն և խոզի գլխաւոր ցեղերը: 40) Մանրէլը: 41) Ընտանի կենդանիների բազմացնելը: 42) Ընտանի թռչունները: 43) Այգեգործութեան նշանակութիւնը: 44) Տնկանոց, ծառ տնկելը: 45) Պատուաստը: 46) Մառերի յօտելը: 47) Պըտաղաբեր ծառեր: 48) Խաղողի վաղը, տնկելը և յօտելը: 49) Վաղի

մշակութիւնը: 50) Վազի թշնամիները: 51) Վազի բուսական պարադիսները: 52) Չիթապողի մշակութիւնը, նուշը: 53) Թըթենիների մշակութիւնը: 54) Շագանակ և ընկոյղ: 55) Անտառապահութիւն: 56) Անտառի շահագործութիւն: 57) Այգիների պլանը ձգելը: 58) Բոյսերի ժամանակից առաջ աճեցնելը, ջերմանոցներ: 59) Բանջարաբուծութեան օգուտները:

Այդ դասերի բովանդակութիւնից կարելի է եզրակացնել թէ Ֆրանսայում սկզբնական դպրոցի բարձր դասարանների դասընթացը աւարտող 15—16 տարեկան պատանին ինչ պաշար ունի գիւղատնտեսութիւնից: Այդ դասերին հետևում են զբօսանքներ, գործնական պարապմունքներ, տեսանելի կերպով բացատրութիւններ են:

2. Գիւղատնտեսական ուսուցումը սկզբնական բարձրագոյն դպրոցներում եւ լրացուցիչ կուրսերում:

Այդ տիպի դպրոցը և նրա կուրսը, եթէ կազմում է սկզբնական դպրոցի շարունակութիւնը և լինում է նրան կից և միևնոյն վարչութեան ձեռքի տակ, աւելում է լրացուցիչ կուրս: Եթէ դպրոցը առանձին շէնքի մէջ է և ունի իր առանձին տեսուչը, աւելում է սկզբնական բարձրագոյն դպրոց:

Այդ դպրոցների ծրագիրը գրեթէ միանման է. լրացուցիչ կուրսը նոյնն է, ինչ որ սկզբնական բարձրագոյն դպրոցին, միայն կրճատ:

Սկզբնական բարձրագոյն դպրոցի դասընթացը սովորաբար երեք տարի է, այնինչ լրացուցիչ կուրսինը՝ երկու: Դպրոցը ունի այնքան դասարան, որքան տարի տևում է ուսումը: Այդ դպրոցներում ընդունւում են սկզբնական դպրոցը աւարտած և վիճակաւ ստացածները: Բարձրագոյն դպրոցի ուսման առարկաները գրեթէ նոյնն են ինչ որ սկզբնականին, միայն աւելի մանրամասն և պահանջւում է նոր լեզուներից մէկի սովորելը: Բարձրագոյն սկզբնական դպրոցները տղայոց ու աղջկերանց համար առանձին առանձին են: Տեսական առարկաների ուսումը միևնոյնն է թէ տղայոց և թէ աղջկերանց դպրոցներում, միայն ձևաբուժութիւնը և փերաբերութեամբ է զանազանւում, օրինակ աղջկերանց դպրոցում սովորեցնում են կար ու ձև, ձևագործ, հացթուխութիւն, խոհարարական:

գործը, անայն անտեսութիւն, իսկ տղայոց՝ ատաղձագործութիւն, դարբնութիւն, փականագործութիւն են: Տղայոց և աղջկերանց բարձրագոյն սկզբնական դպրոցներում գիւղատնտեսութիւնը անցնում են հետևալ ծրագրով՝

1) Գիտութիւն բոյսերի և նրանց կեանքը, բաղմանցնելու եղանակները (սերմով, կտրոնով, պատուաստով), հողերի տեսակները և նրանց կազմը, պարարտացնելու միջոցները և անտեսութեան մէջ հողի այս ու այն բանի յատկացնելը:

2) Տեղեկութիւն երկրագործական դանազան գործիքների, մեքենաների և նրանց գործադրութեան եղանակի մասին:

3) Գիւղատնտեսութեան գլխաւոր աշխատութիւնները, հերկը, ցանքսը, ծառ անկելը, հողերը ջրելը, չորացնելը:

4) Ֆրանսայի գիւղատնտեսութեան գլխաւոր ձեւերը և մասնաւորապէս դպրոցի շրջանում եղածները (հացաբոյսեր, արմատապտուղներ (կարտոֆիլ, ճակնդեղ, չաղգամ և այլն) խոտեր, ձէթ տուղ և թեւ տուղ բոյսեր, վազի մշակութիւն կամ շերամապահութիւն):

5) Բոյսերի հիւանդութիւնները և առաջնա ասնելու միջոցները: Բուսական պարադիսներ:

6) Բանջարանոցի բոյսեր, պտուղներ, ծաղիկներ, ջերմանոց:

7) Պտղատու ծառեր աճեցնելը և նրանց յօտելը (կըտրելը):

8) Ընտանի կենդանիների խնամքը և մեղուապահութիւն: Աղջկերանց սկզբնական բարձրագոյն դպրոցներում գործնական աշխատութիւնները հետևալ ծրագիրը ունին:

ա) Այգու աշխատութիւններ: Հողը, պարարտացնելը, մշակութեան այլեայլ ձևերը, այգու կարգաւորելը (պլանը ձգելը), ճանապարհները և նրանց եզրերի վարդարելը, ցանկապատելը, պատերը, այգեգործական գործիքները, Պտղատու ծառերի այլ և այլ տեսակների խնամքը, որոնք աւելի են համապատասխանում տեղական պահանջներին: Պտղատու ծառերի հիւանդութիւնները: Վնասակար կենդանիների և միջատների փշացնելը: Բանջարանոցի բոյսերի խնամքը և ժողովելը: Սերմերի հաւաքելը, մաքրելը և պահպանելը: Բոյսերի աճելութիւնը արագացնելը: Ծաղիկների մշակութիւնը և անուշահոտ ջրեր պատրաստելը:

բ) Ագարակի աշխատութիւններ: Կովերի խնամատարութիւնը և կաթնատնտեսութիւն: Պանիր և խաչ պատրաստելը: Փարախ և խողանոց: Թռչնանոց: Ընտանի թռչունների բազմացնելը և կերակրելը: Աղանիւններ: Ճաղարներ: Մեղուններ: Շերամի որդը:

գ) Տնեսական աշխատութիւններ: Պտուղներ պահպանելը, պնդացնելը, ճանապարհելը, բանջարների պահպանելը, Պտուղների և բանջարների գործադրութիւնը տնտեսութեան մէջ:

3. Գիւղատնտեսութեան ուսուցումը միջնակարգ դպրոցներում:

Տարրական դպրոցների համար վարժապետներ և վարժուհիներ պատրաստելու համար ծառայում են միջնակարգ դպրոցները: 1879 թուի օրէնքով ամեն մի նահանգ պէտք է ունենայ մի մի աղայոց և աղջկերանց միջնակարգ դպրոց, ոչ ամեն տարի բաւականաչափ ուսուցիչ ու ուսուցչուհի պատրաստելով՝ կարելի լինի թափուր մնացած տեղերը բռնել: Այդ դպրոցները գիշերօթիկ են, միայն իբրև բացառութիւն թոյլատրւում է և երթեկներ ու կիսաթոշակներ ունենալ: Ուսումը և գիշերօթիկ մնալը ձրի է, բայց ամեն մի դպրոց մտնող ստորագրութեամբ պարտաւորւում է տասը տարի լուսաւորութեան միջնատրութեան մէջ ծառայել այդ 10 տարիների մէջ մտնում են և դպրոցում անցրած տարիները — սկսած 18 տարեկան հասակից աղայոց համար և 17 աղջկերանց:

Ամեն միջնակարգ դպրոց աշակերտ, աշակերտուհիների գասաւանդութեան վարժութեան համար ունի իրեն կից սկզբնական դպրոց: Դասընթացը լսելու համար թոյլատրւում է այն ամենքին, որոնք սկզբնական դպրոցի աւարտման վկայական ունին և որոնց տարիքը 16-ից պակաս չէ:

Ուսման ծրագիրը հետևեալն է՝

Ընթերցանութիւն, գրութիւն, ֆրանսական լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, հաշուապահութիւն, տարրական երկրաչափութիւն, ֆիզիքա, բնական պատմութիւն, մանկավարժութիւն և մէկ կամ մի քանի նոր լեզուներ: Աղջկերանց համար իբրև ձեռարուեստ՝ գիւղատնտեսութիւն, տնային տնտեսութիւն, ձեռագործ, այգեգործու-

թիւն, իսկ աղայոց համար նկարչութիւն, երգեցողութիւն, մարմնամարզութիւն, գինեորական մարզանք, հողաչափութիւն և հարթաչափութիւն (նիվելիրովկա):

Դպրոցներում գիւղատնտեսութեան ուսուցումը հետևեալ ծաւալն ունի.

1) Տղայոց միջնակարգ դպրոցներում երկրագործութեան և այգեգործութեան դասերը սկսւում են երկրորդ տարուանից և ունենում է չաբաթական երկու դաս ձմեռուայ դասընթացին. գասաւանդութիւնը լինում է թէ երկրորդ և թէ երրորդ դասարանոց միասին: Տեսականին հետևում է գործնական պարապմունքը, լինում են էքսկուրսիաներ և այցելութիւններ շրջակայքում գտնող բարեկարգ տնտեսութեանց:

Երկրորդ տարուայ դասընթացը հետևեալն է՝

ա) Գիւղատնտեսական բոյսերի մշակութիւնը, հողերի քննութիւնը, նրանց քիմիական կազմի փոփոխութիւնը և ֆիզիքական յատկութիւնները, պարարտացնելը, ոռոգելը, ջրջրոտ հողերի չորացնելը, հերկը, դանազան մշակութիւնները (հացաբոյսեր, խոտեր, լոբաւեսակ բոյսեր, արդիւնաբերական բոյսեր, հողերի բաժանելը: բ) Անասնոց դարմանելը՝ անունդը, ձիերի, տաւարի, ոչխարի և խոզի տեսակները և գ) գիւղատնտեսական տնտեսութիւն:

Երրորդ տարուայ դասընթացում հետևեալ առարկաներն են աւանդւում՝ ա) քնդհանուր հասկացողութիւն հողի մշակութեան, այգու ձև տալը, հողի պատրաստելը, ծառերի տնկելը, բ) Ծառերին տալիք խնամքը, վաղը, դեղձենին, ծիրանը, բալին, դամբուլը, տանձենին, խնձորենին, վարդենին և այլն, գ) Պատուաստը, դ) Բանջարանոց: Աւանդման ժամանակ գլխաւորապէս ուշադրութիւն են դարձնում այն ամենի վրայ, որը կարող է դպրոցի շրջակայքում օգտակար լինել:

2. Աղջկերանց միջնակարգ դպրոցներում գիւղատնտեսութեան ծրագիրն է՝ հողը, պարարտացնելը, մշակութեան այլ և այլ տեսակները, այգու դիրքը, ճանապարհները, կղերն ու պատերը, այգու աշխատութիւններն ու գործիքները. պտղատու ծառերից տեղին աւելի յարմար գլխաւոր տեսակները, պտղատու ծառերի հիւանդութիւնները, վնասակար կենդանիների փչացնելը, բանջարանոցի բոյսերի տեսակները, նրանց մշակելը և հաւաքելը. սերմերի հաւաքելը, մաքրելը և

պահպանելը: Ծաղիկների մշակելը արդ ու զարդի համար և նրանցից հոտաւէա ջրեր պատրաստելը: Տաւարապահութիւն, կաթնատնտեսութիւն, իւղ և պանիր պատրաստելը, ընդհանուր տնտեսութիւն խողապահութեան և ոչխարապահութեան, թռչնանոց, թռչունների բազմացնելը և պարարտացնելը: Աղանիներ, ճագարներ, մեղուններ և չերամի որդը:

Այս առարկաների աւանդման համար յատկացրուած է շաքաթական 2 ժամ դասաւանդման ամբողջ ընթացքում, այն է երեք տարում:

Բացի այս ու այն առարկայի աւանդումը, աշակերտ աշակերտութիւններին ժամանակ ժամանակ կարգում են գիւղատնտեսութեան այս ու այն ճիւղի վերաբերութեամբ յատուկ դասընթացներ, ինչպէս չերամապահութիւն, մեղունապահութիւն և այլն:

Ֆրանսայում ժողովրդական դպրոցների միջոցաւ գիւղատնտեսական գիտութիւնների տարածումը այսպէս ամուր հիմքերի վրայ է դրուած և այնտեղ աշակերտ թէ աշակերտուէի տեսականօրէն ծանօթանում են ֆրանսայում գոյութիւն ունեցող գիւղատնտեսական բոլոր ճիւղերի հետ և մասնաւորապէս այն ճիւղերի, որոնց հնարաւորութիւն կայ մտցնել իրենց դպրոցի չրջավայրում: Տեսական դասաւանդման զուգընթաց թէ տղայոց և թէ աղջկերանց դպրոցներում կատարւում են և գործնական պարապմունքներ և այցելութիւններ օրինակելի տնտեսութեանց, ինչպէս այգիների, գինեւանների, չերամաւանների և այլն, որտեղ այդ գործանքներին առաջնորդող ուսուցիչը կամ վարժուհին բացատրում է նրանց տեսածները:

Իսկ գիւղատնտես ուսուցիչ կամ ուսուցչուհի պատրաստելու համար, ինչպէս ասացինք, միջնակարգ դպրոցներում մտցրուած է գիւղատնտեսութիւնը նոյն սիստեմով, բայց աւելի ընդարձակ ծրագրով և բացի այդ՝ ամեն մի առանձին ճիւղի վերաբերութեամբ լինում են մասնագէտների կողմից պարբերական դասախօսութիւններ:

Այգրական և միջնակարգ դպրոցներում գիւղատնտեսական առարկաների ուսուցումը հարկաւ պահանջում է, որ դպրոցը գործնական պարապմունք համար ունենայ իր մի կտոր հողը այգի չինելու կամ այս ու այն մշակութիւնը անելու: Մանաւանդ լուրջ ուշադրութիւն են դարձնում այգե-

գործութեան վրայ, ուստի դպրոցական այգին մի անհրաժեշտ պահանջ է:

Այս սիստեմի տւած օգուտը ակներև է, տէրութիւնը ամեն տարի նախապատրաստում է իր ապագայ քաղաքացիներին մի շարք գիւղատնտեսական դպրոցների միջոցաւ գիւղատնտեսութեամբ պարապելու, նա տալիս է մեծ ու փոքր կալուածների համար կառավարիչներ, ուսուցիչներ, գիտնական գիւղատնտեսներ ու մասնագէտներ, իսկ գիւղական այն երկրագործ ժողովուրդը, որ միջոց չունի և տնտեսական պայմանները չեն ներում այդ դպրոցներից օգտուելու, այնուամենայնիւ զուրկ չէ մնում գիտութեան մշակած ցուցմունքներից, նա սկզբնական դպրոցից քաղում է այն բոլոր տեղեկութիւնները, որոնք կարևոր են իր մի կտոր հողը աւելի խելացի կերպով մշակելու և իր գործ դրած աշխատութիւնը աւելի արդիւնաբեր անելու:

Թէ արտասահմանում գիւղատնտեսական գիտութիւնները ժողովրդի մէջ տարածելուն ինչ մեծ դեր են խաղում ժողովրդական դպրոցները և որչափ օգտակար է նրանց մասնակցութիւնը այդ բանում, ընթերցողը արդէն որոշ գաղափար կազմեց մեր մէջ բերած Ֆրանսայի և Աւստրա-Հունգարիայի դպրոցների կազմակերպութիւններից, որ ի մի ամփոփելով հետևեալ պատկերը կամ եզրակացութիւնն է ստացւում, որ աչքի առաջ պիտի ունենանք մեզանում ևս գիւղատնտեսական դպրոցների սկիզբը դնելու:

1) Գիւղատնտեսութեան ուսուցումը տեսականապէս և գործնականապէս մտցրուած է ժողովրդական դպրոցների մէջ:

2) Դպրոցների մեծագոյն մասը, աշակերտների և ուսուցիչների գործնական պարապմունք համար, հողաբաժիններ և մրգաբեր այգիներ ունին:

3) Դասաւանդութեան ժամանակ առաւելապէս ուշադրութիւն է դարձնում այն գիտութեանց վրայ, որոնք դպրոցի չրջավայրում կարելի է գործնականապէս դրժողրել:

4) Դպրոցական հողաբաժինը կամ թողնում են ուսուցչի կատարեալ իրաւանց կամ դպրոցի վարչութեան:

5) Հողաբաժինների չափը զանազան է, սկսած 240 քառ. սաժէնից մինչև մի քանի դեսատին:

6) Ժողովրդական դպրոցներին կից տեղ տեղ բացուած

են գիւղատնտեսական բաժանմունքներ:

7) Ուսուցիչներ պատրաստելու, համար հիմնուած են ուսուցչանոցներ:

8) Ժողովրդական կամ սկզբնական դպրոցում ձեռք բերած գիտութիւնը լրացնելու համար կան զանազան հաստատութիւններ ընդհանուր կամ մասնագիտական դասընթացներով:

9) Մասնագէտները երբեմնակի այցելում են դպրոցները և հարկաւոր ցուցմունքները տալիս ուսուցիչներին:

10) Ընդհանրապէս ժողովրդական դպրոցը միջնորդի դեր է կատարում գիւղական ազգաբնակչութեան և այս ու այն հաստատութիւնների մէջ մշակուած բարեկաւութիւնները մտցնելուն, նրանք լրացուցիչ մասն են կազմում և գիւղատնտեսական մասնագիտական դպրոցներին:

Ուսուցչանոցի եւ մասնագիտական դպրոցների անհրաժեշտութիւնը մեզանում:

Մի անգամ սկզբունքով որոշելով գիւղատնտեսական դպրոցներ բանալու անհրաժեշտութիւնը և մեր երկրի գիւղատնտեսութիւնը հաստատ հիւքերի վրայ դնելու խնդիրը, բնականաբար հարց է առաջ գալիս՝ ինչպիսի դպրոցներ բանանք և ինչպէս դնենք այդ դործը, որ նա նպատակաշարմար լինի և հոգադործ ժողովրդի ծով կարիքներին կաբողանայ գոհացումն տալ:

Մեր կարծիքով քանի որ Ռուսաստանի գիւղատնտեսական դպրոցները իրենց կազմակերպութեամբ չեն կարող դահացումն տալ կովկասի բոլոր պահանջներին, քանի որ մեզանում կլիմայական պայմանները ուրիշ են և մշակող բոյսերը բազմազան և մշակութեան եղանակը հողի, ջրի և այլ պայմանների չնորհիւ գրեթէ ուրոյն ամեն մի նահանգում, ուստի ամենից առաջ պէտք է աշխատել մի գիւղատնտեսական ուսուցչանոց բանալ, այնպիսի մի կեդրոնում, ուր կարելի լինի կովկասում գոյութիւն ունեցող գիւղատնտեսութեան եթէ ոչ բոլոր ճիւղերը, գոնէ մեծագոյն մասը՝ ինչպէս գինեգործութիւն, վազի մշակութիւն, չերամապահութիւն, այգեգործութիւն, մեղուապահութիւն, հացաբոյսերի մշակութիւն, անաս-

նապահութիւն, և կաթնատնտեսութիւն և այլն տեսականապէս և դործնականապէս աւանդել և դպրոցական շրջանը աւարտողին այնպէս նախապատրաստել, որ նա կարենայ 1) դասախօսել թէ գաւառական երկդասեան դպրոցներին կից բնացուելիք մասնագիտական բաժիններում, 2) թէ իբրեւ շրջիկ—գիւղատնտես կարենայ զեկավարել իրեն յանձնուած շրջանի գիւղական դպրոցների ուսուցիչներին դպրոցական պարտէզներ կամ ագարակներ բանալու մէջ, 3) թէ ընդունակ լինի գիւղական ժողովրդին մատչելի դրոյցներով ցոյց տալու այն ամեն բարեկաւութիւնները, որոնք հնարաւոր են մտցնել նրա տնտեսութեան մէջ, և 4) թէ իբրեւ կառավարիչ կամ տեսուչ լինել այս ու այն փորձնական կայարանի, օրինակելի ագարակի կամ մասնաւոր կալուածքի: Այդպիսի գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց կամ ուսուցչանոց աւելի նպատակաշարմար է իջմիածնում բանալ, քանի որ նա հայութեան կեդրոնն է կազմում, ունի իր շատ առաւելութիւնները հողի, կլիմայի, մշակող բոյսերի տեսակէտից և բացի այդ վաւեր ունի իր ազատ հոգերը, ուր կարելի է թէ օրինակելի տնտեսութիւն սկսել և թէ դպրոցական չէնք կառուցանել իր բոլոր բաժանմունքներով, ունի պատրաստի այգիներ և գինեհոտն, լծկան ու կթան տաւար, երկրագործական և գինեգործական նորագոյն մեքենաներ և գործիքներ, որոնք կիսով չափ դիւրացնում են գործը և թեթեւեղում անելիք ծախքերը: Բացի այդ՝ ուսուցչանոցը իջմիածնում հիմնելով՝ այս օգտակարութիւնը եւ կունենայ, որ հայութեան ամեն կողմերից եկած ուխտաւորները, որ զլիսաւորապէս գիւղացիներ են լինում, դպրոցի օրինակելի կերպով դրուած տնտեսութիւնը այցելելով, կարող են շատ օգտակար տեղեկութիւններ առնել և իրենց ծննդավայրերում գործադրել, թողնենք այն, որ ձեռնարանի սաներից շատերը դպրանոցական դասընթացը աւարտելուց՝ կարող են մտնել ուսուցչանոցը և գործելու աւելի լայն ասպարէզ ունենալ իրենց առաջ:

Բ. Բացի ուսուցչանոցը անհրաժեշտ է և ամեն մի գաւառում գոնէ մի գիւղատնտեսական երկամեայ դասընթացով դպրոց ունենալ*, որ վեցամեայ տարրական դպրոցի շարու-

*) Գիւղատնտեսական բոլոր դպրոցներում կարելի է ընդունել

նակութիւնը կլինի, որ տեղական պահանջների համեմատ երկսեռ սաներին գիւղատնտեսութեան այս կամ այն ճիւղը կաւանդուի տեսականապէս և գործնականապէս: Այդպիսի դպրոցը միաժամանակ կծառայէ և իբրև վարժոյ այն ուսանողներին, որոնք նոյն գաւառի կամ շրջանի գիւղական չորսամեայ տարրական դպրոցը աւարտելով՝ կցանկանան աւելի կատարելագործուել իրենց ընտրած մասնագիտութեան մէջ:

Գաւառական գիւղատնտեսական երկամեայ դասընթացը աւարտողը կնշանակուի նոյն գաւառի գիւղական դպրոցներից մէկի ուսուցիչ, որը միևնոյն ժամանակ և կվարէ դպրոցական պարտէզի կամ ագարակի կառավարչի պաշտօնը կամ էջմիածնի ուսուցչանոցում շարունակելով ուսումը՝ կստանձնէ գաւառական դպրոցի ուսուցչի պաշտօնը:

գ. Ամեն գաւառում շատ ու քիչ աչքի ընկնող գիւղ իր տարրական չորսամեայ դասընթացով դպրոցը պիտի ունենայ, որ ուսուցումը գլխաւորապէս գործնական հողի վրայ պիտի լինի և գիւղատնտեսական գիտելիքները տեսականապէս և գործնականապէս պիտի աւանդուեն այն չափաւ, ինչ չափաւ մատչելի է երեխայի հասկացողութեանը:

Իոյրը գիւղատնտեսական դպրոցները, իրենց պարտէզները կամ ագարակները պիտի ունենան, որ երկսեռ սաները ուսուցչի կամ վարժուհու ղեկավարութեամբ մշակոււմ են այս ու այն բոյսը, այս ու այն տունկը, ծառը, ծաղիկը, բանջարը, հետևում նրանց աճելութեան, անում իրենց նկատողութիւնները, մասնակցում էքսկուրսիաներին և գործնական աշխատանքի վարժուում: Դպրոցը կարող է ունենալ շերամատուն, մեղուանոց և այլն: Տարրական դպրոցների ագարակները մեծ տեղ չեն բռնում, դրանք բաւական է $1/4$ —1 դեքատին տեղ ունենան, թէև որչափ ընդարձակ լինի դպրոցական հողաբաժինը, այնքան լաւ է: Այդ հողաբաժնի վրայ մշակոււմ են այն ամենը ինչ որ անհրաժեշտ է, ինչ որ գլխաւոր ճիւղն է կազմում այդ շրջանում: Ոչ մի նիւթական շահ չպիտի սպասել այդպիսի ագարակներից, բաւական է, որ նրանք իրենց մանկավարժա-

եւ աշակերտուհիներ այս ու այն մասնագիտական ճիւղը աւանդելու, որոնք աւելի են համապատասխանում տեղական կարիքներին:

կան նպատակին ծառայեն և նրանից գիւղացին կարողանայ օրինակ վերցնել: Դպրոցական ագարակին կից լաւ է և մի որոշ տեղ յատկացնել և ուսուցչին զանազան փորձերի համար:

Այդ երեք կարգի դպրոցների ուսման ծրագիրը այնպէս պիտի կազմուի, գլխաւորապէս բնական գիտութեանց առարկաների վերաբերութեամբ, որ տարրական չորսամեայ դասընթացը աւարտողը պատրաստուած լինի մտնել վեցամեայ դասընթացի համապատասխան դասարանը, այնպէս էլ վեցամեայ դասընթացը աւարտողը՝ ուսուցչանոցի առաջին դասարանը:

Աւելորդ չենք համարում յիշատակել, որ բացի էջմիածնի ուսուցչանոցը և գաւառական դպրոցները, շատ նպատակաշարմար կլինի և մասնագիտական դպրոցներ բանալ և մեր մի քանի վանքերում՝ ինչպէս Սանահին, Հաղբատ, Տաթև, Ամարաս, Գանձասար, Հաղարձին և այդ վանական կալուածների հասոյթներից մաս հանել այդ դպրոցների պահպանութեան*):

Կարծիք չկայ, որ ներկայ հանգամանքներում, քանի որ մենք պատրաստի ուսուցիչներ չունինք, չենք կարող միանգամից շատ տեղերում գիւղատնտեսական դպրոցների հիմքը դնել կամ այս ու այն ճիւղը բանալ, ուստի առայժմ մեր գլխաւոր ուշադրութիւնը պիտի դարձնենք ուսուցչանոցի վրայ, որտեղ մեր դպրոցների համար գիւղատնտես ուսուցիչները պիտի պատրաստուեն:

*) Գաւառական քաղաքներում, գիւղերում կամ վանքերում քացուելիք դպրոցների եւ դպրոցական պարտէզների կամ ագարակների մասին մենք առիթ կունենանք աւելի ընդարձակ խօսելու:

Բ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՅԻՆՐ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒՅԻՆՐ
ԵՆ ՎԱՐԱՎՈՒՆՔԻՐ:

5. Գիւղատնտեսական ուսուցչանոցը ընդունուում են հայ աշակերտներ տաճն տեղերից, որոնք աւարաւած են աար-րական վեցամեայ դասընթացը, թեմական դպրանոցները, ըէպական դպրոցի հինգերորդ դասարանը, անցրած են 15 տարին, մարմնով առողջ են և ընդունակ գործնական աշխա-ւանքի:

Ծանօթ. Աշակերտների ընդունելութեան ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ կովկասի գիւղատնտե-սական չրջանները և աշխատել ամեն մի չրջանից գոնէ մի աշակերտ ունենալ, նախապատուութիւն տալով պիւ-ղական դասակարգին, քան քաղաքացի:

6. Ուսուցչանոց ընդունուելու համար ցանկացողները մինչև օգոստոս ամիսը ներկայացնում են վարչութեան իրենց ուսման, ծննդեան և առողջ կազմուածքի համար վկայական-ները, այլ և ընդունուելու դէպքում՝ ծնօղների կամ խնա-մակալների պարտաւորաթուղթը, նրանց ուսման և փնամա-տարութեան վճարը անթերի հասցնելու:

Ծանօթ. Ուսուցչանոց մտնելու թիւլ է տրուում և այն անձանց, որոնք ուսման վկայական չունին, բայց ոյնքան նախապատրաստուած են, որ վարող են լինու-թիւն բռնել վեցամեայ դասընթացի ըստ ծրագրի հայոց եկեղ. տարրական դպրոցների:

7. Աշակերտները գիշերօթիկ են. կարող փն լինել և երթևեկ:

Ծանօթ. ա. Աշակերտների սնունդը, հագուատը և կեցութիւնը պարզ պիտի լինի և գիւղական վեանքին մօտեցրած:

8. Գիշերօթիկները վճարում են տարեկան 150 ռուբլի, երկու նուագում, սեպտեմբերին և յունվարին: Երթևեկները վճարում են 80 ռուբլի և միայն ձրի անուշդ են ստանում գործնական պարաւմանց ժամանակ:

9. Գիշերօթիկ և երթևեկ աշակերտների թիւը ընդամեն 60 է, առաջին երեք տարին, այնուհետև նայելով դպրոցի

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ս. ԷԶՄԻՍԾՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԶՈՒՆՈՑԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ:

1. Ս. Էջմիածնի գիւղատնտեսական ուսուցչանոցի նպա-տակն է՝ պատրաստել հմուտ ուսուցիչներ կովկասում գոյու-թիւն ունեցող գիւղատնտեսութեան գլխաւոր ճիւղերը տեսա-կանապէս և գործնականապէս աւանդելու և երկրագործ ժողովրդին առաջնորդելու իրենց տնտեսութիւնը բարեօք վիճակի մէջ դնելու:

2. Գիւղատնտեսական ուսուցչանոցը դանուում է Ամե-նայն Հայոց Կաթողիկոսի և նրանից հաստատուած հինգ հոգուց բաղկացած խորհրդի և տեսչի անմիջական հսկողութեան ներքոյ:

3. Ուսուցչանոցի դասընթացը երեքամեայ է և բաժան-ւում է երեք դասարանների: Դասատուութիւնը լինում է տնտական և նրա համապատասխան կատարելում են և գործնա-կան պարաւմունքներ, դպրոցական գրօսանքներ և այցելու-թիւններ այս ու այն տնտեսութեանց:

4. Գիւղատնտեսական դպրոցի միջոցները կազմում են
ա) ս. Էջմիածնի սեպական կալուածներից ստացուած ար-դիւնքի մի մասը. բ) ազգային այս ու այն հաստատութիւն-ներից՝ բարեգործական, կուլտուրական ընկերութիւններից ստացուած օժանդակութիւնները. գ) Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի նպաստը, դ) մասնաւոր անձանց կտակ-ները և նւէրները և ե) աշակերտներից ստացուած թուակա-դրամը:

Ֆիզիոցներին, բնակարանի և այլ յարմարութեանց, կարելի է չատանջել այդ թիւը և ընդունել նաև ազատ ունկնդիրներ երկու սեռից:

10. Աշակերտները պարտաւոր են դպրոցում, ագարակում, աշխատանքում, դպրոցում, շրջանատան և մեղուատան կատարել այն ամեն ֆիզիքական աշխատութիւնները, որոնց համար ուսուցչական խորհուրդը կսահմանէ: Դասաւանդման և գործնական պարապմանց ժամերը օրուայ մէջ պիտի լինի ոչ աւել քան 9 ժամ:

11. Իւրաքանչիւր տարի մանկավարժական խորհուրդը նախապէս կազմում է բոլոր աշխատութեանց և գործնական պարապմանց ծրագիրը, իսկ նրա գործադրութիւնը թողնում այն ուսուցչին, որը աւանդում է այդ առարկան: Գործնական աշխատութիւնները այնպէս պիտի կարգաւորել, որ աշակերտը իր ուսման ընթացքում բոլոր աշխատութիւններին գործնականապէս համահայ և դպրոցը աւարտելուց՝ կարողանայ ոչ միայն ինքնագլուխ գործել, այլ և իրեն բացադրել թէ՛ ինչու մի գործ այսպէս է կատարւում և ոչ ուրիշ կերպ: Թէ տեսուչը և թէ ուսուցչները պարտաւոր են գործնական աշխատութեանց ժամանակ աշակերտներին առաջնորդել:

12. Ուսուցումը սկսւում է սեպտեմբեր 1-ից և շարունակւում է ամբողջ տարին, բացի տօն և կիւրակի օրերը և ձմեռուայ արձակուրդին այն է՝ դեկտ. 15-ից մինչև յունվար 15-ը և ամառը յուլիս մէկից մինչև սեպտեմբեր 1-ը. իսկ գործնական պարապմունքները ամբողջ տարին, բացի ձմեռուայ արձակուրդը: Տօն օրերին ագարակի անյետաձգելի աշխատութիւնները աշակերտները կատարում են հերթով:

13. Աշակերտները ամեն ուսումնական տարեվերջի պարտաւոր են քննութիւն տալ: Այն աշակերտները, որոնք թոյլ են և չեն կարող քննութիւն բռնել կամ կկտրուին, չեն կարող երկրորդ տարին իբրև գիւնթօթիկ մնալ: Սակայն այդ պիտիները ըստ որոշման մանկավարժական ժողովի կարող են երթնել լինել:

14. Ուսուցչանոցի հաւանայ դասընթացը աւարտողը ստանում է վկայական և կարող է լինել ա) ուսուցչի թեմական և զաւառական վեցամեայ դպրոցներին կից բացուելիք գիւղատնտեսական բաժանմունքի, բ) լինել իբրև չրջիկ—

ուսուցչի որոշ չրջանի, կառավարիչ օրինակելի ագարակի կամ փորձնական կայարանի, շրջամատան, մեղուանոցի և այլն. և գ) կառավարիչ մասնաւոր կալուածքի:

15. Իւրաքանչիւր տարի մէկ տարի ժամանակաւ ուսուցչանոցը յառաջագէտ աշակերտներից չորս հոգի պահում է իբրև օգնական ուսուցչներ զործնական աշխատութեանց ժամանակ, որոնցից երկուսին ըստ որոշման մանկավարժական խորհրդի իր հաշուով ուղարկում է Ռուսաստան կամ արտասահման երկու կամ երեք տարով այս ու այն ճիւղը ուսումնասիրելու և կատարելագործուելու: Այդ սաները վերադարձին պարտաւոր են հինգ տարի ուսուցչանոցում կամ այս ու այն զաւառական գիւղատնտեսական դպրոցում ծառայելու, հակառակ դէպքում, նրանք պարտաւորւում են իրենց ստացած օժանդակութիւնը յետ դարձնել դպրոցին *):

Գ. Ուսուցչանոցի ուսման ծրագիրը եւ անհրաժեշտ շինութիւններն ու գոյքը:

Ուսուցչանոցում պիտի աւանդուին՝

1. Փիզիքա, օգրեսութարանութիւն, հանքաբանութիւն:
2. Բուսաբանութիւն և անտառապահութիւն:
3. Անասնապահութիւն և անասնաբուժութիւն:
4. Երկրագործութիւն (հացաբոյսերի, անասնոց կերի համար պէսպէս խոտերի և արդիւնաբեր բոյսերի մշակութիւն):
5. Երկրագործական քիմիա.
6. Գիւղատնտեսական հաշուապահութիւն.
7. Երկրաչափութիւն: Սկզբունք մանկավարժութեան.
8. Գիւղատնտեսական գործիքների և մեքենաների ու սուցումն.
9. Քաղաքացիական ուսմունք:
10. Առողջապահութիւն մարդոց:
11. Այգիագործութիւն (Մրգաբեր այգի և վաղի մշակութիւն):

*) Մենք թողնում ենք ուսուցչանոցի խորհրդի, տեսչի եւ ուսուցչների իրաւանց եւ պարտականութեանց մասին խօսելը, քանի որ դրանք յայտնի են դպրոցական կանոնադրութիւնից:

12. Գինեչխութիւն և օղեհանութիւն.

13. Շերամապահութիւն.

14. Մեղուապահութիւն.

15. Կաթնատնտեսութիւն.

16. Թռչնապահութիւն.

17. Բանջարաբուծութիւն.

Նոր լեզուներից փրանսերէն կամ Գերմաներէն:

Գերդաստնտեսական առարկաների աւանդուծը որչափ հնարաւոր է ընդարձակ պիտի լինի և բացի ընդհանուր տեսութիւնը՝ իր մէջ պիտի պարունակէ Կովկասի տոնէ մի շրջանի գերդաստնտեսութեան այս ու այն ճիւղի պատկերը իր առաւելութիւններով ու պակասութիւններով և նրա ուղիղ ճանապարհի վրայ դնելու հիմունքները:

Ուսուցչանոցը պիտի ունենայ՝

1. Զրարբի հող 40—50 դեսետին՝ տնկանոցի, այգիների, փորձնական դաշտի, բանջարանոցի և այլ մշակութեանց համար:

2. Դպրոցական յարմար շէնք 100 գիշերօթիկ աշակերտի համար իր բոլոր յարմարութիւններով՝ այն է ննջարաններ, սերտարան, սիւնանատուն, դասարաններ, դասախօսութեանց համար դահլիճ, ուր կարելի լինի 200 հոգի տեղաւորել, մատենադարան, ֆիզիքական և քիմիական կաբինետ, թանգարան, ուսուցիչների վերակազմակերպիչ և ծառայողաց համար առանձին բնակարան, խոհանոց, լուսացարան և հիւանդանոց:

3. Գոմանոց, ախոռատուն, փարախ, խոզանոց, հաւանոց:

4. Շերամատուն իր սարքով:

5. Մեղուանոց զանազան սիւսուսի փեթակներով:

6. Կաթնատուն իր սարքով:

7. Գինեատուն իր բաժանմունքներով:

8. Մառան ու մթերանոց:

9. Զերմանոց:

10. Երկրագործական և գինեգործական գործիքներ ու մեքենաներ:

11. Օդերկութարանական կայարան:

12. Կթան և լծկան տաւար, ոչխար, խոզ, ձիեր և հաւեղէն:

13. Դարբնագործութեան և առաջնագործութեան վերաբերեալ գործիքներ և տեղ:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԻ:

Ո՛վ պէտք է էջմիածնի գիւղատնտեսական ուսուցչանոցի հիմնադրութեան, բացման ու խնամատարութեան մասին առաջնորդող դերը ստանձնէ, ով պէտք է գիւղական ժողովրդի ծով կարիքների մասին հոգայ:

Մեր կարծիքով հայ գիւղացու վիճակով ամենից շատ պիտի հետաքրքրուի էջմիածինը իր Հայրապետով, որ ժողովրդի նեղ օրերի միակ սպաւապանը, նրա ցաւերին դեղ ու դարման անողն է եղել: Դարեր եկել, սահել են, հազար ու մի տառապանք հայի գլխով անցել, ամեն տեղ, ամեն ժամանակ հայ ժողովուրդը իր աչքը յառել է էջմիածին և իր Հայրապետից սպասել իր փրկութիւնը: Այժմ գիւղական ժողովրդի կացութիւնը աւելի քան անտանկի, աւելի քան ծանր է. նրա վերջերս հասած աղէտները, աւեր սրածութիւնը, կեանքի ու գոյքի անապահով վիճակը քայքայել են նրա գոյութեան հիմունքները և նա կարօտ է օգնութեան, կարօտ է հովանաւորութեան ու խնամքի: Էջմիածնի Հայրապետը, իբրեւ բարի սերմացան հոգեւոր անդաստանի մէջ, այժմ էլ իր վրայ պիտի առնէ իր հոգեւոր զաւակների ապահովութեան ու բարեկեցութեան խնդրի ձեռնարկները և գործօն դեր պիտի խաղայ և դարձեալ ի վայրի դալարւոյ և առ ջուրս հանգըստեան պիտի մականդէ իր ցրուած ու անխնամ հօտը:

Այհ, ազգի նորընտիր Հայրապետին է վիճակուած գլուխ կանգնել էջմիածնի ուսուցչանոցի ձեռնարկութեան, կոչ անել մեր բանիմաց հասարակութեան ու հաստատութիւններին, որ առաջ նրա դռները բանալ, որպէսզի հայ ուսանողը, նրա մէջ գիտութեամբ զինուելով՝ կարողանայ գիւղական ժողովրդին իր խորհրդով, բանիւ և գործով առաջնորդել, ուղիղ ճանապարհի վրայ դնել նրա քայքայուած տնտեսութիւնը և նրան սիրել տալ մայր հողը, որ նրա գոյութեան կռուի միակ յենակէտն է, նրա բարեկեցութեան միակ ուղիղ ճանապարհը:

Իսկ այն դէպքում, երբ ներկայումս առանձին ուսուցչանոց բանալը նիւթականի պակասութեան կամ ինչ ինչ հանգամանքների շնորհիւ դժուարութիւնների հանդիպի ու

ձգձգուելի, մենք խորհուրդ կտայինք ձեռնարանի լսարաններում մտցնել մանկավարժական, առողջապահական և գիւղատնտեսական առանձին դասընթացներ և հենց ձեռնարանաւարտներից տարին գոնէ երկու հոգի ուղարկել այս ու այն ճիւղը կատարելագործելու:

Գիւղատնտեսական ուսուցչանոց, չրջիկ-գիւղատնտես ուսուցիչներ, գիւղատնտեսական մասնագիտական դասընթացներ, օրինակելի ագարակներ, փորձնական դաշտեր ու կայաններ, գիւղատնտեսական թերթեր ու հրատարակութիւններ, գիւղատնտեսական ցուցահանդէսներ, ահա գործելու մի ընդարձակ ասպարէզ, որ մինչև օրս մեզանում ուշադրութեան չէ առնուել և այսօր դրանց բացակայութեան հետքեր մի ահագին անջրպետ է բացուել մեր և արևմտեան ազգերի գիւղատնտեսութեան մէջ, սակայն այդ անջրպետը կլցուի, երբ մի փոքր հեռատես լինելով՝ առանց ժամանակ կորցնելու կաշխատենք և գիւղատնտեսական գիտութիւնները ընդհանրացնելով մեր երկրագործ ժողովրդի մէջ, կենդանութիւն կտանք մեր ամայի և խոպան միացած դաշտերին և այսօրուայ ընկճուած, տնտեսապէս քայքայուած զեղջուկի մրմունջներն ու հառաչանքները կ'իյրարենք խաղաղ ու մարդավայել կեանքի ուրախ երգերի:



Պատրաստ են տպագրութեան՝

- 1 Ծաղիկների մէջ ծերուկ այգեպանի զրոյցները պատանեկան գրադարան (փոխադրութիւն) . . .
- 2 Փնջիկ II գիրք . . .
- 3 Պատրանք (Миражи) կոմեդիա 5 արար. Վերբիցկու . . .
- 4 Մաքառողներ (Борцы) Չայկովսկու կոմեդիա . . .
- 5 Սէրը յաղթող է կոմ. մի արարուածով . . .
- 6 Միակ որդու եղբայրը Ն. Դանչկնկո. փոխադր. . .
- 7 Խղճմտանքը կորել էր և վայրենի կալուածատէր Շչեքերինց . . .
- 8 Սև Մարգարիտ, Վիկտորիան Սարգուի ֆրանսերէնից . . .
- 9 Սիրոյ վէպիկ (Նովելլա Մատիլդա Սերայօի) ֆրանսերէնից . . .
- 10 Սիրոյ զոհերից մէկը (պատկեր Ղարաբաղի կեանքից) . . .
- 11 Ճանապարհորդական յիշողութիւններից . . .
 - ա) Մի օր սէն Բերնարի վրայ . . .
 - բ) Բագուից Սամարկանդ . . .
- 12 Վաղի մշակութիւնը և գինեգործութիւնը Դերբենդում . . .
- 13 Ազգամի այգիներն ու գինեգործութիւնը . . .
- 14 Բամբակի և ծխախոտի մշակութիւնը . . .
- 15 Ժողովածու մանկական յօդուածների Աղբիւրում հրատարակուած . . .

Պատրաստում են գիւղատնտեսական գրադարանի միւս համարները:



14840

